

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2019

ՀՏԴ 378

ԳՄԴ 74.58

Բ 220

Բ 220 Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթեր.- Եր.: ԵՊՀ հրատ., 2018.- 136 էջ:

Սույն ժողովածուն ներառում է ԵՊՀ ուսումնական գործընթացը կարգավորող պաշտոնական փաստաթղթերի փաթեթը, ինչպես նաև այդ փաստաթղթերին առնչվող համապատասխան ձևաթերթերը ներկայացնող հավելվածները:

Ժողովածուն նախատեսված է ԵՊՀ վարչական ու դասախոսական կազմերի և ուսանողների համար:

ՀՏԴ 378

ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-2379-4

© ԵՊՀ հրատ., 2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	5
ԲԱԺԻՆ 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	
1.1. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ .....	15
ԲԱԺԻՆ 2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	
2.1. Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը .....	47
2.2. Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ .....	60
ԲԱԺԻՆ 3. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	
3.1. Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը .....	81
3.2. Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ .....	93
ԲԱԺԻՆ 4. ՊՐԱԿՏԻԿԱ	
4.1. Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ .....	115
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
I. Բակալավրի կրթական ծրագիր	
ՀԱՎԵԼՎԱԾ-1. Առկա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-1 .....	123
ՀԱՎԵԼՎԱԾ-2. Առկա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-2 .....	125

ՀԱՎԵԼՎԱԾ-3. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-1 .....	127
ՀԱՎԵԼՎԱԾ-4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-2 .....	129
II. Մագիստրոսի կրթական ծրագիր	
ՀԱՎԵԼՎԱԾ-1. Առկա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ .....	133
ՀԱՎԵԼՎԱԾ-2. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ .....	134

## ՆԱԽԱԲԱՆ

1991 թ. անկախացումից հետո Հայաստանի նոր սոցիալ-տնտեսական իրավիճակը բազմաթիվ մարտահրավերներ առաջադրեց երկրի բարձրագույն կրթության համակարգին: Իր գործունեությունը նոր ժամանակների պահանջներին համապատասխան կազմակերպելու և իրականացնելու նպատակով Երևանի պետական համալսարանը ձեռնարկեց մի շարք բարեփոխումներ: Այդ առումով կարևորներից էր ռազմավարական պլանավորումը: 1994 թ. մշակվեց համալսարանի զարգացման առաջին ծրագիրը (ՌԾ), որի համաձայն 1995/1996 ուստարվանից մեկնարկեց որակավորումների բազմաստիճան համակարգով ուսուցման գործընթացը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ներմուծմամբ: Սկսված կրթական վերափոխումների շրջանակում արագորեն ծավալվեցին աշխատանքները կրթության բովանդակային նորացման, դասավանդման և ուսումնառության նոր և առավել արդյունավետ մեթոդների ներդրման, ուսանողներին մատուցվող օժանդակ ծառայությունների կատարելագործման և մի շարք այլ ուղղություններով:

Կատարվեցին նաև կառուցվածքային մի շարք փոփոխություններ: Մասնավորապես, 1994 թ. ՀՀ կառավարության որոշմամբ Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորվելով դարձավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ: Նոր ժամանակների հրամայականով՝ տարբեր տարիների ԵՊՀ-ում վերակազմավորվեցին և բացվեցին մի շարք ֆակուլտետներ ու ամբիոններ, կենտրոններ ու բաժիններ, ներդրվեցին նոր մասնագիտություններ:

2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը միացավ Բոլոնիայի գործընթացին: Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրվելու և իր կրթական գործունեությունը Բոլոնիայի սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով ԵՊՀ-ն ձեռնարկեց մի շարք գործընթացներ. մշակվեց և ԵՊՀ գիտական խորհրդի 2006 թ. հունիսի 1-ի նիստում հաստատվեց «Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցը», համաձայն որի՝ 2007/2008 ուստարվանից մագիստրատուրայում, իսկ 2008/2009 ուստարվանից նաև բակալավրիատում բոլոր մասնագիտությունների գծով ներդրվեց ուսումնառության կրեդիտային համակարգը: Միաժամանակ, մշակվեցին և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվեցին կրեդիտային համակարգով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող փաստաթղթերը, որոնց համաձայն իրականացվեց համապատասխան կրթական ծրագրերի գործող ուսումնական պլանների արմատական վերակառուցում: Մշակվեցին և համալսարանի գիտխորհրդի կողմից հաստատվեցին նաև կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար:

Երևանի պետական համալսարանի առաջին ռազմավարական պլանավորումից մեկուկես տասնամյակ անց մշակվեց և ԵՊՀ խորհրդի 2009 թ. դեկտեմբերի 25-ի նիստում հաստատվեց ԵՊՀ զարգացան ռազմավարական հերթական ծրագիրը՝ 2010-2014 թթ. համար, իսկ ԵՊՀ գիտական խորհրդի 2010 թ. հուլիսի 8-ի նիստում՝ այդ ծրագրի իրականացման ժամանա-

կացույց-պլանը: Նշված ժամանակահատվածում ԵՊՀ գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպվել է ՌԾ-ով նախատեսված նպատակներին և խնդիրներին համապատասխան: Առանձնակի կարևորվել է կրթության որակի բարելավման խնդիրը: Զգալի աշխատանք է իրականացվել մասնավորապես որակի ապահովման գործընթացների ուղղությամբ: Այս համատեքստում հատկապես հիշարժան է պետական հավատարմագրման գործընթացը համալսարանում: Այն մեկնարկեց 2011/2012 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ ընդգրկելով բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներին, նրանց թվում նաև ուսանողների: Իրականացվեցին բարդ, բայց և նպատակասլաց ու հետևողական աշխատանքներ: Մասնավորապես, գործընթացի առաջին փուլում ստեղծվեց ինքնագնահատման գործընթացի կազմակերպումը և համակարգումն իրականացնող հանձնաժողով, որում ընդգրկված էին ներկայացուցիչներ և՛ արտաքին շահակիցներից, և՛ ուսանողներից: Ստեղծվեցին նաև 10 աշխատանքային խմբեր (յուրաքանչյուրը՝ 4-ական անդամով), որոնցում ներգրավված էին ներկայացուցիչներ բոլոր շահագրգիռ շրջանակներից՝ վարչական և դասախոսական կազմերից, ինչպես նաև ուսանողներից: Միաժամանակ, ձևավորվեց ծրագրային ինքնագնահատման աշխատանքային խումբ՝ կազմված 10 անդամից: Ստեղծվեց անհրաժեշտ մեթոդաբանական հենք՝ արդյունավետ ինքնագնահատում իրականացնելու համար, կազմվեց «ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման ուղեցույց»: Կազմակերպվեցին և անցկացվեցին ինքնագնահատման գործընթացների իրականացման պատասխանատու կազմերի վերապատրաստումներ, ապահովվեց ուսա-

նողների ներգրավումը ինքնագնահատման գործընթացներում: Տևական և ծավալուն աշխատանքների արդյունքում իրականացվեց փորձնական (պիլոտային) ինքնագնահատման գործընթաց համալսարանի և մեկ ֆակուլտետի մակարդակում: Հայերեն և անգլերեն տարբերակներով պատրաստված «ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց-2013»-ը և «ԵՊՀ ծրագրային ինքնագնահատման զեկույց-2013»-ը («Կենսաբանություն»՝ բակալավրի և «Գենետիկա»՝ մագիստրոսի կրթական ծրագրեր) ներկայացվեցին փորձագետներին՝ ուսումնասիրության համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի վերջնական փուլում՝ 2013 թ. հունիսի 16-19-ը, կայացավ փորձագիտական խմբի այցը ԵՊՀ: Փորձագիտական խմբում ներգրավված էին երկու միջազգային և երեք տեղական փորձագետներ: Այցի շրջանակներում տեղի ունեցան փակ հանդիպումներ ԵՊՀ արտաքին և ներքին շահակիցների տարբեր խմբերի հետ:

2013 թ. սեպտեմբերին ԵՊՀ-ին ներկայացվեց փորձագիտական խմբի զեկույցը՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար:

Միջազգային և տեղական փորձագետներից կազմված փորձագիտական խումբը ընդհանուր առմամբ դրական գնահատական տվեց ԵՊՀ գործունեությանը: Իսկ ՀՀ ԿԳՆ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովը 2015 թ. փետրվարի 21-ի թիվ 1 որոշմամբ ԵՊՀ-ին շնորհեց ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 6 տարի ժամկետով:

Համալսարանի զարգացման նոր ՌԾ-ն մշակվել է 2016-2020 թթ. համար: Այդ ծրագիրը, դրա իրականացման ժամանակացույց-պլանը և համապատասխան բյուջեն ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը հաստատել է 2015 թ. դեկտեմբերի 23-ի իր նիստում: ՌԾ «Որակյալ կրթություն» նպատակի իրագործմանը միտված՝ ԵՊՀ-ում իրականացվել է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ: Մասնավորապես, վերանայվել, լրամշակվել, նորացվել և ԵՊՀ ԳԽ-ի կողմից հաստատվել են առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող փաստաթղթերը, առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի և բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական պլանների օրինակելի ձևաթերթերը, ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի, բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման, ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգերը:

Սույն ժողովածուն ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող փաստաթղթեր (համապատասխան հավելվածներով), որոնք մշակվել են աշխատանքային խմբերում, նախագծերի տեսքով քննարկվել ֆակուլտետներում, ինստիտուտներում և կենտրոններում, արված առաջարկությունների և կարծիքների հիման վրա լրամշակվել, այնուհետև ներկայացվել ԵՊՀ գիտխորհրդի հաստատմանը:

Ժողովածուի 1-ին բաժնում գետեղված է ԵՊՀ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը»: Այդ փաստաթղթում սահմանված են Երևանի պետական համալսարանում առկա և հետակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները: Ներկայացված են ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատաժամայլը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ուսանողի ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն: Առանձին կետերով սահմանված են նաև առցանց դասընթացի կազմակերպման, կուրսային աշխատանքի պատրաստման և գնահատման, կամրնտրական դասընթացների ընտրության ընթացակարգերը: Կարգը ներառում է նաև ուսանողի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դրույթներ:

Ժողովածուի 2-րդ՝ «Բակալավրի կրթական ծրագիր» բաժնում ներառված են «Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» և «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը» փաստաթղթերը: Առաջինը սահմանում է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատաժամայլները՝ արտահայտված ECTS կրե-

դիտներով: Երկրորդ փաստաթղթում սահմանված են բակալավրի ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջները, տրված են այդ աշխատանքի օրինակելի կառուցվածքը, դրա ձևավորման առանձնահատկությունները, պատրաստման և պաշտպանության ժամանակացույցը, գնահատման չափանիշներն ու չափորոշիչները: Կարգին կից 2 հավելվածներում ներկայացված են աշխատանքի տիտղոսաթերթի ձևանմուշը և հաջորդող էջը՝ նախատեսված ուսանողի, գիտական ղեկավարի և ամբիոնի վարիչի ստորագրությունների համար: 3-րդ հավելվածը նախատեսված է ավարտական աշխատանքի վերաբերյալ գրախոսի կարծիքի համար:

Ժողովածուի 3-րդ՝ «Մագիստրոսի կրթական ծրագիր» բաժնում ընդգրկված են «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» և «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը» փաստաթղթերը: Ինչպես բակալավրի կրթական ծրագրին վերաբերող բաժնում, այստեղ ևս համապատասխանաբար ներկայացված են մագիստրոսի կրթական ծրագրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, դրա կառուցվածքը և բովանդակությունը սահմանող ընդհանուր դրույթները, ծրագրի ավարտական պահանջները, մագիստրոսական թեզի պատրաստման, ձևավորման և հրապարակային պաշտպանության համար պարտադիր պայմաններն ու պահանջները, ինչպես նաև գնահատման չափանիշներն ու չափորոշիչները: Նկարագրված է նաև գնահատման արդյունքների բողոքարկման կարգը: 3-րդ բաժինը ևս ավարտվում է հավելվածներով, որոնք ներկայացնում են թեզի տիտղոսաթերթի, ստորագրությունների համար նախատեսված էջի և գրախոսի կարծիքի ձևանմուշները:

Ժողովածուի 4-րդ բաժնում ներկայացված է «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»: Այստեղ սահմանված են պրակտիկայի դերն ու նշանակությունը ուսանողի՝ մասնագիտական հմտությունների և փորձառության ձեռքբերման գործում, ներկայացված են պրակտիկայի տեսակները և դրանց կազմակերպման մեխանիզմները, պրակտիկայի ղեկավարման կարգը, արդյունքների գնահատման մեթոդաբանությունը:

Ժողովածուի վերջում տրված են վերոնշյալ փաստաթղթերի համապատասխան հավելվածները:

**ԲԱԺԻՆ 1**  
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

- 1.1. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ



**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԿԱՐԳ**

*(Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ.  
մայիսի 4-ի թիվ 7 նիստում)*

**1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետև՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետև՝ ԵՊՀ) առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները:
- 1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն:
- 1.3. Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ կանոնադրությանը համապատասխան:

**2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատաձևավալը**

- 2.1. ԵՊՀ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը առկա ուսուցման համար սահմանվում է 1800 ժամ,

որը համարժեք է 60 ECTS կրեդիտի, իսկ հեռակա ուսուցման համար՝ 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:

- 2.2.** Բակալավրի կրթական ծրագրի լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ:
- 2.3.** Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ), իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 2 տարի (4 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 8 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ, 7 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ ու ստուգարքներ և 3 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.4.** Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 4 շաբաթ լսարանային պարապմունքներ<sup>1</sup>, 1 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ

---

<sup>1</sup> Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով:

ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:

- 2.5.** Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրի տևողությունը 2,5 տարի է (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 3 շաբաթ լսարանային պարապմունքներ, 2 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.6.** Մանկավարժի որակավորում ստանալու համար համապատասխան մասնագիտությունների ուսանողները լրացուցիչ պետք է կուտակեն 30 կրեդիտ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կարգ»-ի:
- 2.7.** Բակալավրի կրթական ծրագրի յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում նախատեսվում է առավելագույնը 5 քննություն, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ քննությունների թիվը չի գերազանցում 3-ը: Մագիստրոսի կրթական ծրագրում այդ քննությունների թիվը սահմանվում է ըստ օրինակելի ուսումնական պլանի:
- 2.8.** Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը գնահատվում են 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն ԵՊՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերի:

### **3. Գիտելիքների ստուգումը և գնահատումը**

#### **3.1. Համակարգի հիմնադրույթները**

**3.1.1.** ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) կազմակերպել ուսումնառության համաչափ գործընթաց և խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,

բ) ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման միջոց օգտագործելու համար:

**3.1.2.** Գնահատումը ներառում է հետևյալ բաղադրամասերը.

ա) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ),

բ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, որը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

գ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասըն-

թացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

**3.1.3.** Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորության աստիճանը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 4 խմբի՝

- ա) *եզրափակիչ գնահատումով,*
- բ) *առանց եզրափակիչ գնահատման,*
- գ) *առանց ընթացիկ գնահատման,*
- դ) *ստուգարքային:*

## **3.2. Դասընթացների գնահատումը**

**3.2.1.** *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* դեպքում, քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննությունից բացի, նախատեսվում է 2 ընթացիկ քննություն:

*Ընթացիկ և եզրափակիչ քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) նշվում է կրթական ծրագրի մասնագրում:*

**3.2.2.** *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար

(կիսամյակային) գնահատականը /միավորը ( $Q_{արդ.}$ ) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից ( $\sum P_{ընթ.}$ ), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 5 միավոր,

բ) եզրափակիչ քննության արդյունքից ( $P_{եզր.}$ ), որը կարող է գնահատվել առավելագույնը 10 միավոր:

Գարնընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար.

$$Q_{արդ.} = \sum P_{ընթ.} + P_{եզր.}:$$

Ըստ այդմ՝ *եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 1*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով<sup>2</sup>).

*Աղյուսակ 1.*

Գնահատման բաղադրամասը	$P_{ընթ.1}$	$P_{ընթ.2}$	$P_{եզր.}$	$Q_{արդ.}$
Առավելագույն միավորը	5	5	10	20

**3.2.3. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը** գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական

<sup>2</sup> Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը առնվազն 1 միավոր է, իսկ գնահատման քայլը՝ 0,5: Առաջադրանքների գնահատականները գումարվում են, և վերջնական արդյունքը ներկայացվում է ամբողջ թվով:

նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների արդյունքներով:

**3.2.4. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից** (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Փարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից ( $\Sigma \text{Քընթ.}$ ), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին ընթացիկ քննություններից վաստակած միավորների գումար.

$$\text{Փարդ.} = \Sigma \text{Քընթ.}:$$

Ըստ այդմ՝ *առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 2*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով<sup>3</sup>).

*Աղյուսակ 2.*

Գնահատման բաղադրամասը	Քընթ 1	Քընթ 2	Փարդ.
Առավելագույն միավորը	10	10	20

Վերոնշյալը (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2) կիրառվում է նաև հեռակա ուսուցման համար:

<sup>3</sup> Տե՛ս սույն կարգի 3.2.2. կետը:

- 3.2.5.** Լաբորատոր աշխատանքի ձև ունեցող դասընթացի ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60 % կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ դեպքում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական տեղեկագրում նշանակվում է «0» միավոր:
- 3.2.6.** Դասընթացը կարող է լինել *եզրափակիչ գնահատումով* միայն այն դեպքում, եթե կիսամյակում ունի առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն:
- 3.2.7.** *Առանց ընթացիկ գնահատման* (միայն եզրափակիչ քննությամբ) և *առանց եզրափակիչ գնահատման* կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթացները:
- 3.2.8.** *Ստուգարքային* կարող են լինել բակալավրիատի ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացները, մագիստրատուրայի ընդհանուր դասընթացները, ինչպես նաև մագիստրատուրայի «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» մասնագիտական դասընթացը:
- 3.3. Գնահատման գործընթացի կազմակերպումը**
- 3.3.1.** Կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում դասախոսը ուսանողներին տեղեկացնում է գիտելիքների ստուգման ձևերի, հարցաշարերի և ժամկետների, ինչպես նաև գնահատման մեթոդների ու չափանիշների մասին:

- 3.3.2.** Ֆակուլտետները կազմում են քննաշրջանների ժամանակացույցները, որոնք հաստատում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն, իսկ ուսանողներին տեղեկացվում է նրանց համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով:
- 3.3.3.** Ընթացիկ քննություններն անցկացվում են՝ առկա ուսուցման դեպքում՝ ուսումնառության կիսամյակի 9-րդ և 17-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 6÷7-րդ և 11÷12-րդ շաբաթներում (այդ շաբաթներում դասեր չեն նախատեսվում):
- 3.3.4.** Եզրափակիչ քննությունները առկա ուսուցման դեպքում անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18÷20-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 13÷16-րդ շաբաթներում:
- 3.3.5.** Բանավոր քննության և ստուգաքթի ավարտից հետո դասախոսը տեղեկագիրը սկանավորման համար նույն օրը ներկայացնում է դեկանատ, իսկ գրավոր քննության տեղեկագիրը դասախոսը սկանավորման համար դեկանատ է ներկայացնում տվյալ քննության ավարտին հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.3.6.** Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգաքթների գնահատականը հրապարակելու օրը ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը գրավոր դիմելու

դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, անհրաժեշտության դեպքում նաև ֆակուլտետի դեկանին:

- 3.3.7.** Գրավոր քննությունները գրառվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տետրերում: Ուսանողը և դասախոսը պետք է պահպանեն քննական տետրում ներկայացված պահանջները:
- 3.3.8.** Ստուգարքի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվում է միայն ուսանողի ներկայությամբ (բացառությամբ «Չն»-ի): Եզրափակիչ գնահատումով դասընթաց(ներ)ի ընթացիկ քննությունները հանձնելուց հետո, եթե ուսանողի արդյունաբար միավորը 8 կամ բարձր է, ապա ուսանողն իրավունք ունի տվյալ դասընթացի եզրափակիչ քննությանը, հետևաբար նաև լուծարքային շրջանին չներկայանալ, և այդ դեպքում տեղեկագրի համապատասխան պունակներում կատարվում է «Չն» նշումը, և պահպանվում է ուսանողի 8 կամ բարձր միավորը: Ստուգարքին/քննությանը չներկայանալու դեպքում կատարվում է «Չն» նշումը:
- 3.3.9.** Քննաշրջանը կամ առանձին ստուգարքներ/ քննություններ ուսանողը համապատասխան հիմնավորմամբ ժամկետից շուտ կարող է հանձնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի թույլտվությամբ:
- 3.3.10.** Ընթացիկ քննությունները, ստուգարքները և եզրափակիչ քննությունները հեռավար ձևով կազմակերպելը թույլատրվում է միայն ռեկտորի հրամանով:

### 3.4. Գնահատման սանդղակը

3.4.1. ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

*Աղյուսակ 3.*

Գնահատման արդյունաբար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»

### 3.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

3.5.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում գրանցելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար լրացվում է *ակադեմիական տեղեկագիրը*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունաբար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

3.5.2. Ուսանողի վաստակած կրեդիտները նրա ուսումնառության ողջ շրջանում գրանցվում և կուտակվում են ակադեմիական տեղեկագրում:

**3.5.3.** Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- *գումարային կրեդիտներ,*
- *գնահատված կրեդիտներ,*
- *վարկանիշային միավորներ,*
- *միջին որակական գնահատական:*

**3.5.4.** *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

**3.5.5.** *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտի այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$ԳԿ = \sum \text{Կրեդիտ}_i$$

**3.5.6.** *Վարկանիշային միավորը (ՎՄ)* թվային միավորներով գնահատված դասընթացների (մոդուլների) կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումարն է.

$$ՎՄ = \sum \text{Կրեդիտ}_i \times \mathbf{Q}_{արդ. i}$$

որտեղ  $\mathbf{Q}_{արդ. i}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից ստացել է համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վարկանիշային միավորն է՝

$$\varphi U = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238 \text{՝ } 300 \text{ հնարավորից (} 5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20 \text{):}$$

**3.5.7.** Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\varphi U}{\text{ԳԿ}} :$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝  $\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15,87 \text{՝ } 20 \text{ հնարավորից:}$

**3.5.8.** Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունաբար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։

#### **4. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը**

**4.1.** Քննաշրջանի արդյունքներով դրական (8 և բարձր) միավոր ստացած ուսանողին տվյալ դասընթացը վերահանձնել չի թույլատրվում։

- 4.2. Եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողին չի թույլատրվում այն վերահանձնել:  
**(4.2 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017 թ. թիվ 8/4 որոշմամբ):**
- 4.3. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել լուծարքային շրջանում:  
**(4.3 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017 թ. թիվ 8/4 որոշմամբ):**
- 4.4. Առանց ընթացիկ գնահատման դասընթացի քննությանը կամ ստուգարքային դասընթացի ստուգարքին չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել լուծարքային շրջանում:  
**(4.4 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017 թ. թիվ 8/4 որոշմամբ):**
- 4.5. Ակադեմիական պարտքերի մարման կարգը սահմանվում է ԵՊՀ ռեկտորատի կողմից, և այդ ընթացքում ստուգարքների և/կամ քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են ռեկտորի հրամանով:
- 4.6. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի՝ 8-ի շեմը չհասնող և/կամ ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 1 և 3 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝  $Q_{արդ.} = 1 + 3 + 3 = 7$ , որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Այս դեպքում պահպանվում են միայն ընթացիկներից ստացած միավորները, այսինքն՝ 4, և պարտքերի մարման շրջանում ուսանողը վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, սլյալ օրինակի դեպքում՝ 7:

- 4.7. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում ընթացիկ քննությունները պետք է վերահանձնի առանձին-առանձին (իր ցանկությամբ՝ մեկը կամ երկուսը) և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 2 և 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝  $Q_{արդ.} = 2 + 3 = 5$ , որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Վերահանձնելով ընթացիկ քննություն(ներ)ը՝ ուսանողը կարող է վաստակել դրական նվազագույն 8 միավոր և ավելի: Եթե

*ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը:*

- 4.8.** *Առանց ընթացիկ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:
- 4.9.** Գնահատման վերոնշյալ կանոնները վերաբերում են նաև հեռակա ուսուցման համակարգին:
- 4.10.** Բակալավրի կրթական ծրագրում ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո, եթե առաջացած առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա համաձայն սահմանված կարգի՝ ուսանողը (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ՊՆ (կամ այլ ուժային կառույցների) պատվերով սովորող ուսանողների) կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ:
- (4.10 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 11.04.2019 թ. թիվ 9/8.2 որոշմամբ):**
- 4.11.** Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո մագիստրոսի կրթական ծրագրում թույլատրվում է հանձնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ը, եթե դասընթացի գնահատման արդյունարար միավորը 5-7 տի-

րույթում է, իսկ 4 և ցածր արդյունաբար միավորի դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

- 4.12. Քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների՝ համալսարանից հեռացման վերաբերյալ որոշումը կայացվում է ըստ ԵՊՀ ռեկտորատի սահմանած չափանիշների:
- 4.13. Մագիստրոսի կրթական ծրագրում մագիստրոսական թեզի պատրաստման կատարողականը ատեստավորվում է համապատասխան ուսումնական ստորաբաժանման կողմից՝ համաձայն ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի պահանջների:
- 4.14. Մագիստրոսական թեզի ատեստավորումը չանցած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով: Հեռացված ուսանողը վերականգնումից հետո շարունակում է կատարել նախկինում հաստատված թեմայով մագիստրոսական թեզը:

## **5. Ուսանողի անձնական գործը և ուսումնական քարտը**

- 5.1. Ուսանողի անձնական գործը նրա ողջ ուսումնառության ընթացքում դեկանատում պահվող հիմնական փաստաթղթերից է:
- 5.2. Բակալավրիատի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ կրթության վկայականը (բնօրինակ), ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները, կենտրոնացված և ներբուհական քննությունների դեպքում՝ համապատասխան հիմքերը, ընդհանուր մրցույթից դուրս ընդունվածների համապա-

տասխան փաստաթղթերը: Բացի այդ, ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի՝ բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները,
- ընդունելության միասնական քննությունների արդյունքների մասին վկայականը, որը համալսարան ընդունված դիմորդը ներկայացնում է սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում:

**5.3.** Մագիստրատուրայի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները, ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները: Նշվածներից բացի՝ ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի՝ բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները:

- 5.4. Համալսարանն ավարտելուց հետո ուսանողի անձնական գործն ամբողջությամբ՝ ներառյալ ստուգման գրքույկը, շրջանցիկ թերթիկը, դիպլոմի և դրա հավելվածի պատճենները և ավարտման հրամանը, հանձնվում է ԵՊՀ արխիվ:
- 5.5. Ուսանողի հետ պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ուսումնական էլեկտրոնային քարտում ֆակուլտետի դեկանատի կողմից մուտքագրվում են ուսանողի անձնական տվյալները, նրան վերաբերող բոլոր հրամանները, և տեղադրվում է նրա լուսանկարը: Ուսանողի քննաշրջանի արդյունքները քննաշրջանից հետո ուղարկվում են ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեին:

## 6. Դասընթացների տեղեկագիրքը

- 6.1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է *ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք*, որը տեղադրվում է համալսարանի կայքէջում:
- 6.2. *Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.
- ա) առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը և «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը»,
- բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված կրթական վերջնարդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի նպատակը և կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված կրթական մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

**7. Առցանց դասընթացի կազմակերպումը**

**7.1.** ԵՊՀ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով:

**7.2.** Առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեն նույնը:

- 7.3. Առցանց եղանակով նախատեսվող դասընթացի նյութը պատրաստում է իրականացնող ամբիոնը և ներկայացնում ֆակուլտետի մեթոդական խորհրդին՝ երաշխավորություն ստանալու համար:
- 7.4. Առցանց ուսուցման էլեկտրոնային միջավայրի տեխնիկական ապահովումը և վերահսկողությունն իրականացնում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոնը և տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը:
- 7.5. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առցանց դասընթացներ իրականացնող ամբիոնը ՏՏԿՀ կենտրոնին ներկայացնում է դրանց անվանումները, դասախոսներին և ընդգրկված ուսանողներին, որի հիման վրա ՏՏԿՀ կենտրոնն ապահովում է առցանց միջավայր:
- 7.6. Առցանց դասընթացը վարող դասախոսը վերահսկում է ուսանողների մասնակցությունը, տրամադրում և շարունակաբար թարմացնում է էլեկտրոնային ուսումնական նյութերը, առցանց կապի մեջ է լինում ուսանողների հետ, կազմակերպում է քննարկումներ և սեմինարներ:
- 7.7. Ուսանողները ստանում են տեխնիկական աջակցություն էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

## **8. Պրակտիկայի կազմակերպումը**

- 8.1. Պրակտիկան ուսանողի մասնագիտական կրթության կարևոր և անբաժանելի բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է ուսումնառության ընթացքում ստացած գի-

տելիքների գործնական կիրառության հմտությունների զարգացմանը:

- 8.2.** Բակլավրի կրթական ծրագրով սովորող ուսանողները, մասնագիտությամբ պայմանավորված, կարող են անցնել հետևյալ պրակտիկաներից մի քանիսը՝ ուսումնական (ճանաչողական, դաշտային, էքսկուրսիոն, թանգարանային և այլն), մասնագիտական (արտադրական, գիտահետազոտական, փորձարարական), մանկավարժական, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողները՝ միայն մասնագիտական պրակտիկա:
- 8.3.** Ուսումնական պրակտիկան կազմակերպվում է բակլավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար, որի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսանողի ընդհանուր մասնագիտական գիտելիքները:
- 8.4.** Մասնագիտական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների նեղ մասնագիտական հմտությունները:
- 8.5.** Պրակտիկայի տեսակը, տևողությունը և ժամկետները սահմանվում են համապատասխան կրթական ծրագրով:
- 8.6.** Պրակտիկան կազմակերպվում և վերահսկվում է ուսումնամեթոդական վարչության կողմից՝ պրակտիկայի ծրագրի և ժամանակացույցի համաձայն, համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) պրակտիկայի պատասխանատու(ներ)ի հետ համատեղ:
- 8.7.** Պրակտիկայի ամբողջ ընթացքն արձանագրվում է ուսանողի օրագրում: Պրակտիկայի ավարտին այն իրականացնող հաստատության պատասխանատու անձը օրագրում

ներկայացնում է կարծիք և բնութագիր: Օրագիրը կցվում է ուսանողի անձնական գործին:

- 8.8. Մասնագիտությամբ աշխատող ուսանողը ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
- 8.9. Պրակտիկան գնահատվում է ստուգարքի ձևով: Պրակտիկայի ղեկավարը «Ստուգված» նշում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային և կատարել է առաջադրանքները:

## **9. Կուրսային աշխատանքի պատրաստումը և գնահատումը**

- 9.1. Կուրսային աշխատանքը նպատակաուղղված է դասընթացի կամ դասընթացների խմբի ուսումնասիրության արդյունքում ուսանողի ստացած գիտելիքների կիրառության հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:
- 9.2. Կուրսային աշխատանքի թեման և ղեկավարին հաստատում է ամբիոնը կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում և տեղեկացնում ուսանողներին:
- 9.3. Թեմայի հաստատումից հետո մեկշաբաթյա ժամկետում կուրսային աշխատանքի ղեկավարը ուսանողի հետ կազմում է առաջադրանքը և նրան տրամադրում համապատասխան գրականության ցանկը:
- 9.4. Կուրսային աշխատանքի ղեկավարը կանոնավոր խորհրդատվությունների ժամանակացույցը ներկայացնում է ամբիոն և տեղեկացնում ուսանողներին:
- 9.5. Ուսանողը ավարտած կուրսային աշխատանքը (տպագիր և էլեկտրոնային) ամբիոն է ներկայացնում պաշտպանությունից առնվազն 7 օր առաջ:

- 9.6. Կուրսային աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է առնվազն երկու դասախոսից (որոնցից մեկը կուրսային աշխատանքի ղեկավարն է) կազմված հանձնաժողովում:
- 9.7. Պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:
- 9.8. Գնահատականի վերաբերյալ անհամաձայնության դեպքում ուսանողը նույն օրը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին:

## 10. Կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգը

- 10.1. Բակլավրի կրթական ծրագրի կամընտրական դասընթացներ են նախատեսվում *ընդհանուր կրթական* և *մասնագիտական* կառուցամասերում:
- 10.2. Ընդհանուր կրթական կառուցամասի կամընտրական դասընթացների ցանկից ուսանողն ընտրում է երկուսը:
- 10.3. Մագիստրոսի կրթական ծրագրի կամընտրական դասընթացները նախատեսվում են մասնագիտացման դասընթացների կրթամասում, որոնցից ուսանողն ընտրում է հինգը:
- 10.4. Կամընտրական դասընթացներին ուսանողները գրանցվում են ֆակուլտետում, և արդյունքները սահմանված ժամկետում ներկայացվում են ուսումնամեթոդական վարչություն:
- 10.5. Կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցումը կատարվում է նախորդող ուստարում՝ մինչև ապ-

րիլի 1-ը: Սահմանված վերջնաժամկետից հետո գրանցումներ չեն կատարվում:

**10.6.** Համալսարանը կարող է չեղարկել ցանկացած կամընտրական դասընթացի իրականացումը, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ՝ ըստ սահմանված նորմերի:

## **11. Կրթական ծրագրի ղեկավարը**

**11.1.** Կրթական ծրագրի պատշաճ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման նպատակով նախատեսված են կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներ:

**11.2.** Կրթական ծրագրի ղեկավարը կազմում է նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

**11.3.** Կրթական ծրագրի ղեկավարը ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ ձևակերպում է ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

**11.4.** Կրթական ծրագրի ղեկավարը կազմակերպում է ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը, որին մասնակից է դարձնում նաև գործատուներին և արտաքին այլ շահակիցների:

**11.5.** Կրթական ծրագրի ղեկավարը ապահովում է ծրագրի հրապարակայնությունն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:

- 11.6. Կրթական ծրագրի ղեկավարը ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկավարության հետ միասին կրթական ծրագիրը նախապատրաստում է հավատարմագրման:
- 11.7. Կրթական ծրագրի ղեկավարը չի կարող ղեկավարել նույն կրթական մակարդակի մեկից ավելի կրթական ծրագրեր:

## **12. Ուսումնական խորհրդատուն (կուրատորը)**

- 12.1. Առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով նշանակվում են ուսումնական խորհրդատուներ, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են:
- 12.2. Ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ 30 ուսանողի համար նախատեսելով մեկ խորհրդատու:
- 12.3. Ուսումնական խորհրդատուն ուսանողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին (ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ԵՊՀ ներքին կարգապահական, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման և այլն), ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն:
- 12.4. Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում նրանց ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝

հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ:

**12.5.** Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետի գիտական խորհուրդը լսում և գնահատում է ուսումնական խորհրդատուների հաշվետվությունները:

### **13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

#### **13.1. Ուսանողն իրավունք ունի՝**

- սահմանված կարգով ցանկացած կրթական մակարդակում ընդհատելու կամ շարունակելու մասնագիտական կրթությունը,
- սահմանված կարգով վերականգնելու ընդհատած ուսանողական իրավունքները ԵՊՀ-ում,
- մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց (արտածրագրային), որը դասավանդվում է ԵՊՀ-ում՝ ըստ սահմանված կարգի,
- հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- օգտվելու ԵՊՀ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային,

ուսումնասարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

- ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,
- լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բուհերը) կամ փոխելու մասնագիտությունը,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ուսումնառության տվյալ կամ ամբողջ ժամանակահատվածի համար,
- ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի երկլեզու դիպլոմի հավելվածը:

### **13.2. Ուսանողը պարտավոր է՝**

- ծանոթանալ սույն կարգին և հետևել դրա պահանջներին,
- կատարել դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- հաճախել իր կրթական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,
- սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,
- վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում ժամանակին վճարել ուսման վարձավճարը,
- հոգատար վերաբերվել ԵՊՀ գույքին,
- կատարել սույն կարգով, ԵՊՀ կանոնադրությամբ և ԵՊՀ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ուսանողի պարտականությունները:



## ԲԱԺԻՆ 2

### ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

- 2.1. Երևանի պետական համալսարանի քակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը
- 2.2. Երևանի պետական համալսարանում քակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ**  
**ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
*(Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ.  
մայիսի 4-ի թիվ 7 նիստում)*

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1.** «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ղեկավար ձեռնարկը սահմանում է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով:
- 1.2.** Բակալավրի կրթական ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասերից՝ ընդհանուր կրթական և մասնագիտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար իրականացվում են համաձայն Աղյուսակ 1-ում և 2-ում ներկայացված աշխատածավալների համամասնության.

**Աղյուսակ 1. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական  
ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական  
կառուցամասերի հարաբերակցությունը**

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	Ընդամենը
Ընդհանուր կրթական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	32		12		0	0	0	0	<b>44</b>
Մասնագիտական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	30		50		30	30	30	26	<b>196</b>
Ընդամենը, <i>կրեդիտ</i>	31	31	31	31	30	30	30	26	<b>240</b>

**Աղյուսակ 2. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական  
ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական կառու-  
ցամասերի հարաբերակցությունը**

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	Ընդամենը
Ընդհանուր կրթական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	32		12		0	0	0	0	0	0	<b>44</b>
Մասնագիտական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	16		36		24	24	24	24	22	26	<b>196</b>
Ընդամենը, <i>կրեդիտ</i>	24	24	24	24	24	24	24	24	22	26	<b>240</b>

- 1.3.** Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որից 15 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգաքնններին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին:
- 1.4.** Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որից 4 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին, խորհրդատվություններին և ընթացիկ քննություններին, իսկ 4-ը՝ եզրափակիչ քննություններին: Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (իսկ լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով:
- 1.5.** Բակալավրի կրթական ծրագրի կառուցման հիմքում դրված է 240 կրեդիտ ուսումնական բեռնվածությունը, որն առկա ուսուցման մեկ կիսամյակի համար կազմում է 30 կրեդիտ (10 % թույլատրելի շեղումով), իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 24 կրեդիտ (10 % թույլատրելի շեղումով): Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունն առկա և հեռակա ուսուցման համար 1,5 կրեդիտ է ( $30 \text{ կրեդիտ} / 20 \text{ շաբաթ} = 1,5 \text{ կամ } 24 \text{ կրեդիտ} / 16 \text{ շաբաթ} = 1,5$ ) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝  $1 \text{ կրեդիտ} = 30 \text{ ժամ}$ :

- 1.6.** Ընդհանուր կրթական կառուցամասի աշխատածավալը ծրագրի 240 կրեդիտ ընդհանուր ծավալում կազմում է առավելագույնը 44 կրեդիտ (18 %), իսկ մասնագիտական կառուցամասինը՝ նվազագույնը 196 կրեդիտ (82 %): Երկու կառուցամասերն էլ ներառում են տարբեր կրեդիտատարությամբ դասընթացներ և ուսումնական մոդուլներ: Ընդհանուր կրթական կառուցամասն ընդգրկում է պարտադիր և կամընտրական դասընթացներ: Մասնագիտական կառուցամասը ներառում է պարտադիր, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ (կուրսային աշխատանքներ, պրակտիկա(ներ) և 20 կրեդիտ ծավալով ավարտական աշխատանք):
- 1.7.** Առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական առավելագույն լսարանային բեռնվածությունը 1-ից 4-րդ կիսամյակներում կազմում է մինչև 30 ժամ, իսկ 5-ից 7-րդ կիսամյակներում՝ մինչև 28 ժամ: Առկա ուսուցման 8-րդ, իսկ հեռակա ուսուցման՝ 10-րդ կիսամյակներում լսարանային բեռնվածությունն չի նախատեսվում: Կրթական այն ծրագրերում, որտեղ նախատեսվում են ուսումնական պրակտիկաներ, տվյալ կիսամյակի լսարանային բեռնվածությունը համապատասխանաբար նվազում է:
- 1.8.** Հեռակա ուսուցման բակալավրի ծրագրի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը սահմանվում է առկա ուսուցման ձևի լսարանային ժամերի 1/3-ի չափով, իսկ մնացածը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար:

1.9. Ծրագրի բաղկացուցիչ դասընթացների՝ կրեդիտներով արտահայտված աշխատաձավալը հաշվարկվում է՝ ելնելով Աղյուսակ 3-ում ներկայացված ժամային համամասնություններից<sup>4</sup>:

**Աղյուսակ 3. Դասընթացի (մոդուլի) ինքնուրույն աշխատաձավալի որոշման նորմերը**

Դասընթաց/մոդուլ			
Շաբաթական լսարանային պարապմունք			Շաբաթական ինքնուրույն աշխատանք
Ժամ	պարապմունքի ձևը		Ժամ
1	դասախոսություն	+	1 – 2 <sup>5</sup>
1	սեմինար/գործնական	+	0.75 – 1.5
1	լաբորատոր	+	0.5-1

**1.9.1.** Դասընթացի (մոդուլի) շաբաթական լրիվ աշխատաձավալը որոշվում է ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների գումարով: Ելնելով լսարանային պարապմունքի ձևից և համապատասխան ժամաքանակից՝ որոշվում է ուսանողից պահանջվող ինքնուրույն աշխատանքի ծավալը, որի և լսարանային ժամաքանակի հանրագումարը

<sup>4</sup> Դասընթացի կրեդիտը (աշխատաձավալը) պայմանավորված է պարապմունքի ձևով, դասավանդման և ուսումնառության մեթոդներով, դասընթացի բովանդակային առանձնահատկություններով և այլն: Մինևույն լսարանային ժամաքանակի պարագայում տարբեր դասընթացներ կարող են ունենալ տարբեր աշխատաձավալներ, հետևաբար՝ նաև կրեդիտներ:

<sup>5</sup> Պահանջվող ինքնուրույն աշխատանքի շաբաթական ժամաքանակը տրված միջակայքում որոշում է ամբիոնը՝ հաշվարկելով 1 ժամ լսարանային պարապմունքի ընթացքում մատուցված նյութը յուրացնելու համար ուսանողից պահանջվող իրական ժամաքանակը:

կազմում է դասընթացի շաբաթական լրիվ աշխատածավալը:

**1.9.2.** Դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը որոշվում է՝ շաբաթական լրիվ բեռնվածությունը բազմապատկելով 15 շաբաթով և ստացված գումարը 30 ժամի վրա բաժանելով:

**1.9.3.** Դասընթացին հատկացվող լսարանային ընդհանուր ժամաքանակը չի կարող գերազանցել ինքնուրույն աշխատանքների համար նախատեսվող ժամաքանակը:

**1.10.** Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանի ձևաթերթերը ներկայացված են համապատասխան հավելվածներում:

## **2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

### **2.1. Ընդհանուր կրթական կառուցամաս**

*Ընդհանուր* կրթական կառուցամասը նպատակաուղղված է բակալավրի որակավորման ընդհանուր հենքի (ընդհանրական/փոխանցելի գիտելիքներ և կարողություններ) ապահովմանը: Այն ընդգրկում է պարտադիր և կամընտրական դասընթացներ:

**2.1.1. Պարտադիր դասընթացների** ընդհանուր աշխատածավալը 40 կրեդիտ է, որը ներառում է 14 մոդուլ և Ֆիզդաստիարակությունը, որի համար կրեդիտ չի հատկացվում (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս դասընթացները իրականացվում են 1-ին և 2-րդ կուրսերում և նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների և կարողու-

թյունների ձևավորմանը և զարգացմանը, ինչպես, օրինակ, մայրենի և օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, իրավունքի հիմնադրույթների ճանաչմանը, արտակարգ իրավիճակներում ճիշտ և կազմակերպված կողմնորոշմանը և այլն:

**(2.1.1 ենթակետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 21-ի նիստի թիվ 3/4 որոշմամբ):**

**2.1.2. Կամրնտրական դասընթացների** ընդհանուր աշխատածավալը 4 կրեդիտ է և ներառում է 2 կրեդիտանոց 2 դասընթաց (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Կամրնտրական դասընթացները նպատակաուղղված են ուսանողների սոցիալ-տնտեսական, բնագիտական և մշակութային ընդհանուր գիտելիքների ձևավորմանը և զարգացմանը: Կամրնտրական դասընթացներն իրականացվում են 2-րդ կուրսում, իսկ ուսանողների կողմից դրանց ընտրությունը կատարվում է 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում՝ մինչև ապրիլի 1-ը: Կամրնտրական դասընթացների բաշխումն ըստ ֆակուլտետների և կիսամյակների իրականացվում է Ուսումնամեթոդական վարչության հետ համատեղ: Կամրնտրական դասընթացների առաջարկվող ցանկն ընդգրկում է միայն 2 կրեդիտանոց դասընթացներ: Վերոնշյալ ցանկը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կարող է վերանայվել ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ: Կամրնտրական դասընթացը կայանում է, եթե դրանում ընդ-

գրկված են նվազագույն թվով ուսանողներ (համաձայն ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի): Անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել միջֆակուլտետային հոսքեր:

**(2.1.2 ենթակետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 21-ի նիստի թիվ 3/4 որոշմամբ):**

## **2.2. Մասնագիտական կառուցամաս**

*Մասնագիտական կառուցամասը նպատակաուղղված է բակալավրի որակավորման մասնագիտական հենքային գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Այն ընդգրկում է պարտադիր մասնագիտական, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ և կրթական այլ մոդուլներ: Մասնագիտական կառուցամասի պարտադիր և կամընտրական (հատուկ մասնագիտական) մոդուլ-դասընթացների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 42-ը:*

**2.2.1. Պարտադիր մասնագիտական դասընթացների** աշխատածավալը 154 կրեդիտ է, իսկ հատուկ մասնագիտական դասընթացների առկայության պարագայում՝ 142 (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս կրթամասի բովանդակությունը, դասընթացների կազմն ու դրանց կրեդիտատարությունը որոշում են ծրագիրն իրականացնող ֆակուլտետները և ամբիոնները՝ ապահովելով բակալավրի կրթական մակարդակում տվյալ մասնագիտության համար պահանջվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների

ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով որակավորումների ազգային (առկայության դեպքում նաև ոլորտային) շրջանակների և մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջները, ինչպես նաև տվյալ մասնագիտության միջազգային ծրագրային չափանիշները և հենանիշները:

**2.2.2. Կամրնտրական մասնագիտական դասընթացներն**

ապահովում են ուսանողի նեղ մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Կամրնտրական մասնագիտական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 12 կրեդիտ է: Առաջարկվող դասընթացների ցանկը ներառում է ընտրվող դասընթացների քանակից կրկնակի ավել և միննույն կրեդիտատարությամբ դասընթացներ: Այս կամրնտրական դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում:

**2.2.3. Հատուկ մասնագիտական դասընթացներ:**

Կրթական ծրագրի կառուցվածքում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, կամրնտրական մասնագիտական դասընթացների փոխարեն կարող են նախատեսվել հատուկ մասնագիտական դասընթացներ: Դրանք նպատակաուղղված են մասնագիտության որևէ նեղ ոլորտում խորացված գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը: Հատուկ մասնագիտական դասընթացների ընդհանուր ուսումնական աշխատածավալը 24 կրեդիտ է:

Դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում:

**2.2.4. Կրթական այլ մոդուլներ:** Ծրագրի կրթական այլ մոդուլների աշխատաձևավալը 30 կրեդիտ է, որը ներառում է 2 կրեդիտանոց 2 կուրսային աշխատանք, 6 կրեդիտ աշխատաձևավալով մասնագիտական պրակտիկա (կրթական ծրագրի առանձնահատկություններից ելնելով՝ կարող է ներառվել նաև համապատասխան աշխատաձևավալով ուսումնական պրակտիկա) և 20 կրեդիտ աշխատաձևավալով ավարտական աշխատանք:

1. Կուրսային աշխատանքները նախատեսված են մասնագիտական ոլորտում ստացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների զարգացման համար: Կուրսային աշխատանքները կատարվում են 5-ից 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-ից 9-րդ) կիսամյակներում և գնահատվում են 20 միավորանոց սանդղակով: Կուրսային աշխատանքի կատարման կիսամյակում համապատասխանաբար նվազում է այդ կիսամյակի լսարանային բեռնվածությունը (ժամերը):
2. Մասնագիտական պրակտիկական կազմակերպվում է 8-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ) կիսամյակում՝ համապատասխան ամբիոնի (կենտրոնի, ինստիտուտի) կողմից կազմված և հաստատված ծրագրով: Այն կազմակերպվում է մասնագիտական ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում և հաստատություններում՝ 6 կրեդիտ աշխատաձևավալով և 6-շաբաթյա տևողությամբ, որն ավարտվում է ստուգաբարով: Ուսանողները պրակտիկայի կատար-

ման վերաբերյալ ներկայացնում են սահմանված ձևաչափի և բովանդակության հաշվետվություն: Մասնագիտությամբ աշխատող ուսանողն ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

3. Այս բաժնում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, կարող են նախատեսվել նաև պրակտիկայի այլ ձևեր, որոնց իրականացման կիսամյակը և կրեդիտատարությունը (շաբաթները) որոշում է ֆակուլտետը կամ մասնագիտացնող ամբիոնը (պահպանելով 1 շաբաթ = 1 կրեդիտ համամասնությունը): Ծրագրում պրակտիկայի այլ ձևեր նախատեսելու դեպքում համապատասխանաբար նվազում է պարտադիր մասնագիտական դասընթացների քանակը, կրեդիտների ընդհանուր թիվը, ինչպես նաև լսարանային բեռնվածությունը (ժամերը):
4. Ավարտական աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 8-րդ, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ կիսամյակում: Բոլոր ուսանողները մինչև 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան ավարտական աշխատանքի հրամանագրված թեմաներ և ղեկավարներ: Հրամանագրումն իրականացնում է ֆակուլտետը: Ավարտական աշխատանքի ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են՝ համաձայն «Երևանի պետական համալսարանում ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի»: Ավարտական աշ-

խատանքի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 20 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

### **3. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Բակալավրի ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրվում են այնպես, որ բավարարեն ոլորտը կարգավորող հետևյալ պաշտոնական փաստաթղթերի պահանջները.

1. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի* մակարդակների նկարագրիչներով բակալավրի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով<sup>6</sup>:
2. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակի* (առկայության դեպքում) որակավորումների նկարագրիչներով տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով:

---

<sup>6</sup> ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշումը ՀՀ որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին:

3. ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկի<sup>7</sup> և կրթական ծրագրի մասնագրի<sup>8</sup> կազմման պահանջները:
4. Տվյալ մասնագիտական ոլորտում կիրառվող միջազգային ծրագրային կողմնորոշիչները և հենանիշները (բենչմարքները), տեղական և գլոբալ մասնագիտական աշխատաշուկայի պահանջները և այլն:

---

<sup>7</sup> ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ, 2012 թ.:

<sup>8</sup> ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրի լրացման ուղեցույց, 2016 թ.:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ  
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ**

*(Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ.  
հոկտեմբերի 12-ի թիվ 1 նիստում)*

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Բակալավրի ավարտական աշխատանքն ինքնուրույն, տեսական կամ կիրառական նշանակության աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտության շրջանակներում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող խնդիրներ բարձրացնելու ու լուծումներ առաջադրելու հմտությունները:
- 1.2. Բակալավրի ավարտական աշխատանքի կատարումը և հրապարակային պաշտպանությունը բակալավրի կրթական ծրագրի ավարտական պահանջներից են:
- 1.3. Ավարտական աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 8-րդ կիսամյակում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ կիսամյակում: Բոլոր ուսանողները մինչև 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան բակալավրի

ավարտական աշխատանքի հրամանագրված թեմաներ և դեկավարներ: Ավարտական աշխատանքի պատրաստման և պաշտպանության համար բակալավրի կրթական ծրագրում նախատեսվում է 20 կրեդիտ աշխատաձևով:

**2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

**2.1.** Բակալավրի ավարտական աշխատանքի օրինակելի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Բակալավրի ավարտական աշխատանքի օրինակելի կառուցվածքը և ներկայացվող պահանջները**

<b>Կառուցվածքը</b>	<b>Ներկայացվող պահանջները</b>
<i>Տիտղոսաթերթ</i>	Տիտղոսաթերթը լրացվում է համաձայն Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի
<i>Ստորագրությունների էջ</i>	Բակալավրի ավարտական աշխատանքի տիտղոսաթերթին հաջորդող էջում ստորագրում են ուսանողը, դեկավարը և ամբիոնի վարիչը (տե՛ս Հավելված 2)
<i>Համառոտագիր</i>	Տրվում են աշխատանքի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումները, իսկ համառոտագիրը ներկայացվում է այն լեզվով, որով շարադրված է աշխատանքը (0,5-1 էջ)
<i>Բովանդակություն</i>	Ըստ հերթականության ներկայացվում են աշխատանքի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում), որոնք կցվում են աշխատանքին
<i>Ներածություն</i>	Ներկայացվում են աշխատանքի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսում-

	նասիրության օբյեկտը և առարկան, տեսական և/ կամ կիրառական նշանակությունը
<i>Հիմնական մաս</i>	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների և կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը, վերլուծությունը և ամփոփումը
<i>Եզրակացություններ</i>	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի արդյունքները
<i>Օգտագործված գրականության ցանկ</i>	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է աշխատանքը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված
<i>Հավելվածներ</i>	Առկայության դեպքում կցվում են աշխատանքին

### 3. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1. Բակալավրի ավարտական աշխատանքը պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր (կազմված) և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափերը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման հա-

մակարգի տառատեսակների կիրառմամբ: Վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 4-րդ էջ:

**3.2.** Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

**3.3.** Աշխատանքի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկը, որը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն

և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, ... // URL: <http://www.info...>, 14.02.2017):

- 3.4. Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]) կամ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը (Պողոսյան, 2015; Պետրոսյան և այլք, 2010), կամ տողատակում, ինչպես ներկայացվում է օրինակում<sup>9</sup>:
- 3.5. Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի (կենտրոնի, ինստիտուտի) գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից:

#### **4. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

- 4.1. Բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար սահմանված ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն՝ համապատասխանաբար ավարտական 8-րդ և 10-րդ կիսամյակներում (տե՛ս Աղյուսակ 2):
- 4.2. Բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման աշխատանքները կատարվում են ղեկավարի խորհրդատվությամբ և վերահսկողությամբ:  
Ղեկավարի պարտականություններն են.

---

<sup>9</sup> Սալանյան Լ., Ալավերդյան Ռ., Լույսի բնեռացումը և նրա հետազոտումը: Ուս. ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014 թ., էջ 53:

- ա) բակալավրի ավարտական աշխատանքի առաջադրանքի կազմում,
- բ) աշխատանքի կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում և դրա իրականացման վերահսկողություն,
- գ) թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրության և օգտագործման համար առաջարկություններ կամ խորհրդատվություն,
- դ) խորհրդատվություն ուսանողին՝ բակալավրի ավարտական աշխատանքի կատարմանն առնչվող հարցերում՝ համաձայն խորհրդատվությունների համար ուսումնական ստորաբաժանման կողմից սահմանված կիսամյակային ժամանակացույցի,
- ե) ծանուցում ուսանողին՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,
- զ) խորհրդատվություն (օգնություն) ուսանողին՝ ելույթի պատրաստման և պաշտպանության համար անհրաժեշտ ցուցադրական նյութերի ընտրության հարցում,
- է) աշխատանքի վերաբերյալ ղեկավարի գրավոր կարծիքի կազմում:

**4.3. Ղեկավարի կարծիքում արտացոլվում են.**

- ա) աշխատանքի արդիականությունը և կարևորությունը,
- բ) ուսանողի՝ ինքնուրույն աշխատելու, տվյալներ մշակելու և եզրակացություններ անելու կարողությունը,
- գ) գործնական առաջարկությունների առկայությունը,
- դ) կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները,

ե) աշխատանքի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,

զ) երաշխավորություն աշխատանքի հրապարակային պաշտպանության համար:

**4.4.** Բակալավրի ավարտական աշխատանքի նախապաշտպանությունն իրականացվում է մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանումում (միջամբիոնային հանձնախմբում)՝ ստորաբաժանման և Բակալավրի կրթական ծրագրի ղեկավարների, ինչպես նաև ուսանողի ավարտական աշխատանքի ղեկավարի մասնակցությամբ:

**4.5.** Աշխատանքի նախապաշտպանության ընթացքում գրագողության<sup>10</sup> հայտնաբերման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին:

**4.6.** Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

**4.7.** Բակալավրի ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգի<sup>11</sup>:

---

<sup>10</sup> «Ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենք ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն», ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, գլուխ 5, հոդված 65, 4-րդ կետ (ընդունվել է 15.06.2006):

<sup>11</sup> «Հայաստանի Հանրապետության Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների

**Աղյուսակ 2. Բակալավրի ավարտական աշխատանքի պատ-  
րաստման և պաշտպանության ժամանակացույց**

Գործողություն	Վերջնաժամկետ
Բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի ընտրություն և հաստատում, դեկավարի նշանակում և հրամանագրում	7-րդ (հեռակա՝ 9-րդ) կիսամյակի ավարտ
Աշխատանքի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում, գրականության վերլուծություն/մշակում	Ավարտական կիսամյակ՝ փետրվար
Աշխատանքի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի ներկայացում և քննարկում ուսումնական ստորաբաժանումում, որոնց հիման վրա իրականացվում է աշխատանքի կատարման առաջընթացի միջանկյալ ստուգում	Ավարտական կիսամյակ՝ մարտի վերջ
Աշխատանքի արդյունքների ամփոփում, աշխատանքի հանձնում՝ ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանում	Ավարտական կիսամյակ՝ պաշտպանությունից առնվազն 3 շաբաթ առաջ
Ղեկավարի կարծիքի ներկայացում, աշխատանքի նախապաշտպանություն: Էական դիտողությունների առկայության դեպքում՝ աշխատանքի լրամշակում և ներկայացում ու-	Ավարտական կիսամյակ՝ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ

ամփոփիչ ատեստավորման կարգ՝ հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2017 թ. նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրամանով:

սումնական ստորաբաժանում մեկ շաբաթվա ընթացքում	
Ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի գրախոսության կազմակերպում (տե՛ս Հավելված 3)	Ավարտական կիսամյակ, գրախոսականի ներկայացում ուսումնական ստորաբաժանում պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ
Բակալավրի ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում	8-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ) կիսամյակի ավարտ <sup>12</sup>

## 5. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- 5.1.** Բակալավրի ավարտական աշխատանքի գնահատումն իրականացվում է 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորոշիչների (տե՛ս Աղյուսակ 3):
- 5.2.** Ուսանողի արդյունաբար միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած արդյունաբար միավորների միջինն է:
- 5.3.** Ուսանողի ավարտական աշխատանքը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:

<sup>12</sup> Բակալավրի ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության ժամկետները սահմանվում են ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով:

**5.4.** Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողների ներկայությամբ:  
**(5.2, 5.3, 5.4 ենթակետերը լրացվել են ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2018 թ. փետրվարի 14-ի նիստի թիվ 4/2 որոշմամբ):**

## **6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ**

- 6.1.** Գնահատման արդյունքների հրապարակումից հետո հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:
- 6.2.** Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում, դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:
- 6.3.** Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» վերոնշյալ կարգի (այսուհետև՝ Կարգ) ընթացակարգային դրույթների խախտումներ:
- 6.4.** Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց անմիջապես հետո շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն սույն կարգի 5.1 կետում սահմանված չափանիշների և չափորոշիչների:
- 6.5.** Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրարկման և գնահատման միավորների հաշվարկման ու ամ-

փոփման սխալների հայտնաբերման դեպքում հանձնա-  
ժողովը.

ա) փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնա-  
բերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման  
արդյունքի վրա,

բ) չի փոխում գնահատականը, եթե սխալը կամ թերու-  
թյունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,

գ) չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առ-  
կա են Կարգի ընթացակարգային լուրջ խախտումներ, և  
անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն:

**(6-րդ կետը լրացվել է ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2018 թ.  
փետրվարի 14-ի նիստի թիվ 4/2 որոշմամբ):**

**Աղյուսակ 3. Բակալավրի ավարտական աշխատանքի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները**

*Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն* \_\_\_\_\_

*Աշխատանքի թեման* \_\_\_\_\_

*Հանձնաժողովի անդամ՝ գիտ. աստ., կոչում, ազգանուն, անուն* \_\_\_\_\_

Գնահատման չափանիշ/ առավելագույն միավոր	Չափորոշիչ	Հատկացվող միավոր	Ընդհանուր միավոր
<p>1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը</p> <p><i>Առավելագույնը՝ 2 միավոր</i></p>	<p>1.1. Հիմնավորված է աշխատանքի արդիականությունը, սահմանված են աշխատանքի նպատակը և խնդիրները: Կատարված է թեմային առնչվող գրականության վերլուծություն</p>	<p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p> <p><input type="checkbox"/> - 0</p>	
<p>2. Աշխատանքի կատարումը և արդյունքները</p>	<p>2.1. Աշխատանքը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան</p>	<p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p> <p><input type="checkbox"/> - 0</p>	

<b>Առավելագույնը՝ 6 միավոր</b>	2.2. Ստացված արդյունքները հիմնավորված են և առաջադրում են դրված խնդիրների տեսական կամ կիրառական լուծումներ	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0
	2.3. Կատարված է արդյունքների վերլուծություն, և արված են համապատասխան եզրակացություններ	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0
	3.1. Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0
<b>3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը</b>	3.2. Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Առկա են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0
<b>Առավելագույնը՝ 4 միավոր</b>		

	(օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	
<p><b>4. Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը</b></p> <p><i>Առավելագույնը՝ 8 միավոր</i></p>	<p>4.1. Չեկույցում հիմնավորվում են աշխատանքի արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացվում են աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները</p>	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0
	<p>4.2. Չեկույցը հստակ է և հետևողական, զեկուցողը կարողանում է փոխկապակցված ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել արդյունքները</p>	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0
	<p>4.3. Հարցերին և դիտողություններին զեկուցողը տալիս է հիմնավորված և սպառիչ պատասխաններ</p>	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0

	<p>4.4. Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը</p>	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0	
<p><i>Արդյունադար առավելագույն միավորը՝ 20</i></p>			

**ՀԱՎԵԼՎԱԾ 1.**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ [16 pt, Bold]**

\_\_\_\_\_ **ՖԱԿՈՒԼՏԵՏ [14 pt, Bold]**

\_\_\_\_\_ **(ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ) [14 pt, Bold]**

\_\_\_\_\_ **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ [14 pt, Bold]**

**ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ [18 pt, Bold]**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ [30 pt, Bold]**

**ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ [18 pt, Bold]**

« \_\_\_\_\_ » *մասնագիտությամբ*  
\_\_\_\_\_ *բակալավրի որակավորման*  
*աստիճանի հայցման համար [14 pt, Bold, Italic]*

**ԵՐԵՎԱՆ 2017 [13 pt, Bold]**

## ՀԱՎԵԼՎԱԾ 2.

***Ուսանող՝ \_\_\_\_\_ [13 pt, Bold, Italic]***  
*ստորագրություն*

---

*ազգանուն, անուն*

***Ղեկավար՝ \_\_\_\_\_ [13 pt, Bold, Italic]***  
*ստորագրություն*

---

*գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն*

**«Թույլատրելի պաշտպանության»**

***Սմբիոնի վարիչ՝ \_\_\_\_\_ [13 pt, Bold, Italic]***  
*ստորագրություն*

---

*գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն*

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ.

**ԿԱՐԾԻՔ**

ԵՊՀ \_\_\_\_\_ ֆակուլտետի բակալավրիատի ուսանող \_\_\_\_\_-ի

*(ազգանուն, անուն, հայրանուն)*

*(թեմայի անվանումը)*

**ավարտական աշխատանքի վերաբերյալ<sup>13</sup>**

**1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը**

---

---

---

**2. Աշխատանքի կատարումը և արդյունքները**

---

---

---

---

**3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը**

---

---

<sup>13</sup> Գրախոսը նախապես պետք է ծանոթ լինի սույն կարգում սահմանված բակալավրի ավարտական աշխատանքի գնահատման չափանիշներին:

---

---

**4. Դիտողություններ**

---

---

---

---

**5. Եզրակացություն** (աշխատանքը բավարարում է/չի բավարարում բակալավրի ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է/արժանի չէ տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորման աստիճանի շնորհմանը)

---

---

**Գրախոս՝**

---

*(ազգանուն, անուն, հայրանուն)*

---

*(գիտական աստիճան և կոչում)*

---

*(աշխատանքի վայրը, պաշտոնը)*

Ստորագրություն \_\_\_\_\_

«\_\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ.

## **ԲԱԺԻՆ 3**

### **ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

- 3.1. Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը
- 3.2. Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և զնահատման կարգ



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ  
ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

*(Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ.  
հունիսի 7-ի թիվ 8 նիստում)*

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. «ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» դեկավար ձեռնարկը սահմանում է մագիստրոսի ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի աշխատածավալներն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական ու հետազոտական մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով, դրանց իրականացման և գնահատման ժամկետները և այլն:
- 1.2. Մագիստրոսի ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասերից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքները առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար իրականացվում են ուսումնական և հետազոտական կառուցամասերի՝ աղյուսակ 1-ում և 2-ում ներկայացված ծավալների համամասնությամբ.

**Աղյուսակ 1. Առկա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ուսումնական և հետազոտական կառուցամասերի հարաբերակցությունը**

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	27	27	21	0	75
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	3	3	9	30	45
<b>Ընդամենը, կրեդիտ</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>120</b>

**Աղյուսակ 2. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ուսումնական և հետազոտական կառուցամասերի հարաբերակցությունը**

Կիսամյակ	I	II	III	IV	V	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	21	21	21	12	0	75
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	3	3	3	9	27	45
<b>Ընդամենը, կրեդիտ</b>	<b>24</b>	<b>24</b>	<b>24</b>	<b>21</b>	<b>27</b>	<b>120</b>

**1.3.** Առկա ուսուցմամբ մագիստրոսի ծրագրի տևողությունը 2 տարի է (4 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որից 15 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին, իսկ 3-ը՝ քննաշրջանին:

**1.4.** Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի ծրագրի տևողությունը 2,5 տարի է (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի հա-

մար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որից 3 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին և խորհրդատվություններին, 2-ը՝ ընթացիկ քննություններին, իսկ 3-ը՝ քննաշրջանին: Առանձին դեպքերում, մասնագիտական առանձնահատկություններից ելնելով, ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկով և ռեկտորի թույլտվությամբ տեսական ուսուցման կազմակերպումը կարող է իրականացվել նաև 12-շաբաթյա ժամանակահատվածում:

- 1.5. Մագիստրոսի կրթական ծրագրի կառուցման հիմքում դրված է 120 կրեդիտ ուսումնական բեռնվածությունը, որն առկա ուսուցման մեկ կիսամյակի համար կազմում է 30 կրեդիտ, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 24 կրեդիտ: Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման դեպքում  $1,5$  կրեդիտ է ( $30$  կրեդիտ/ $20$  շաբաթ= $1,5$  կամ  $24$  կրեդիտ/ $16$  շաբաթ= $1,5$ ) կամ  $45$  ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝  $1$  կրեդիտ =  $30$  ժամ:
- 1.6. Անհրաժեշտության դեպքում, ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկությամբ, ԵՊՀ գիտական խորհուրդը կարող է որոշել մագիստրոսի կրթական ծրագիրն իրականացնել նաև  $60$  կամ  $90$  կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ:
- 1.7. Ուսումնական կառուցամասի աշխատաձևավալը ծրագրի  $120$  կրեդիտ ընդհանուր ծավալում կազմում է  $75$  կրեդիտ, իսկ հետազոտական կառուցամասինը՝  $45$  կրեդիտ: Ծրագիրը բաղկացած է  $3$  կամ  $6$  կրեդիտ աշխատաձևավալով մի շարք դասընթացներից և ուսումնական ու հետազոտա-

կան այլ մոդուլներից, ինչպես նաև 27 կրեդիտ ծավալով մագիստրոսական թեզից:

- 1.8.** Առկա ուսուցման մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը կազմում է ընդհանուր ժամերի 1/3-ը, իսկ մնացածը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար: Օրինակ, եթե որևէ դասընթացի ուսումնական պլանով հատկացված է 3 (6) կրեդիտ աշխատածավալ, որի ժամային համարժեքը կազմում է 90 (180) ժամ, ապա դասընթացին հատկացվող լսարանային աշխատանքի ժամաքանակը 30 (60) ժամ է, իսկ ինքնուրույն աշխատանքինը՝ 60 (120) ժամ: Ըստ այդմ՝ 15-շաբաթյա տեսական ուսուցման պայմաններում այդ դասընթացների շաբաթական լսարանային ժամերը կկազմեն համապատասխանաբար 2 կամ 4 ժամ:
- 1.9.** Հեռակա ուսուցման մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը սահմանվում է առկա ուսուցման ձևի լսարանային ժամերի 1/3-ի չափով, իսկ մնացածը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար: Օրինակ, եթե որևէ դասընթացի ուսումնական պլանով հատկացված է 3 (6) կրեդիտ աշխատածավալ, որի ժամային համարժեքը կազմում է 90 (180) ժամ, ապա դասընթացին հատկացվող լսարանային աշխատանքի ժամաքանակը կկազմի 10 (20) ժամ, իսկ ինքնուրույն աշխատանքինը՝ 80 (160) ժամ:
- 1.10.** Առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի ծրագրերի ուսումնական պլանի ձևաթերթերը ներկայացված են համապատասխանաբար *հավելված 1-ում և 2-ում:*

## 2. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է *ընդհանուր, մասնագիտական* և *մասնագիտացման դասընթացների* կրթամասերից: Վերջինս պարունակում է ինչպես պարտադիր, այնպես էլ կամրնտրական դասընթացներ: *Ընդհանուր* կրթամասը ծառայում է մագիստրոսի որակավորման աստիճանի ընդհանուր հենքի (ընդհանրական գիտելիքներ և կարողություններ) ապահովմանը կամ համալրմանը, *մասնագիտական* կրթամասը կոչված է տվյալ մասնագիտության շրջանակներում ապահովելու պահանջվող ընդհանուր գիտելիքներն ու կարողությունները, իսկ *մասնագիտացման* կրթամասը ծրագրի անհատականացված ուսուցման մասն է, որը նախատեսված է զարգացնելու խորացված գիտելիքներ, կարողություններ և հմտություններ մասնագիտության որևէ նեղ ասպարեզում:

**2.1.1. Ընդհանուր դասընթացների կրթամասի** աշխատածավալը 15 կրեդիտ է և ներառում է երեք պարտադիր դասընթաց՝ *Օտար լեզու*<sup>14</sup> (9 կրեդիտ), *Տեղեկատվական տեխնոլոգիաները (SS) մասնագիտական ոլորտում* (3 կրեդիտ), *Հետազոտության պլանավորում և մեթոդներ* (3 կրեդիտ): Ընդհանուր դասընթացները նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական/փոխանցելի գիտելիքների և կարողությունների ձևավորմանը, մասնավորապես՝ օտար լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցմանը,

---

<sup>14</sup> Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն: Լեզվական խմբերը ձևավորվում են ուսանողների դիմում-հայտերի հիման վրա:

տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, հետազոտության պլանավորմանը և տարբեր մեթոդների կիրարկմանը:

**2.1.2. Մասնագիտական դասընթացների կրթամասի աշխատածավալը** 15 կրեդիտ է և ընդգրկում է *Մասնագիտության արդի հիմնախնդիրները* (3 կրեդիտ) և 6-ական կրեդիտ աշխատածավալով երկու ընդհանուր մասնագիտական դասընթացներ: Այս կրթամասը նպատակաուղղված է մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալման ապահովմանը և մասնագիտության հենքային գիտելիքների ու կարողությունների զարգացմանը:

**2.1.3. Մասնագիտացման դասընթացների կրթամասի աշխատածավալը** 45 կրեդիտ է և բաղկացած է համապատասխանաբար 24 և 21 կրեդիտ աշխատածավալներով *պարտադիր* և *կամընտրական* դասընթացներից: Պարտադիր դասընթացների խումբը բաղկացած է չորս 3 կրեդիտանոց և երկու 6 կրեդիտանոց, իսկ կամընտրականը՝ երեք 3 կրեդիտանոց և երկու 6 կրեդիտանոց դասընթացներից: *Պարտադիր* դասընթացներն ապահովում են մագիստրոսի կրթական մակարդակում տվյալ մասնագիտացմամբ պահանջվող խորացված գիտելիքների և կարողությունների, իսկ *կամընտրական դասընթացները*՝ մագիստրոսական թեզի թեմայով և ուսանողի նեղ մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Կամընտրական դասընթացներն ընտրվում են գիտական ղեկավարի հետ խորհրդակ-

ցելով՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագրերի դասընթացների առաջարկվող ցանկից: Տվյալ ծրագրի շրջանակներում առաջարկվող կամընտրական դասընթացների թիվը 9 է (երեք հատ 6 և վեց հատ 3 կրեդիտանոց): Այդ ցանկից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը կազմում է առնվազն 15 կրեդիտ, իսկ մնացած 6 կրեդիտը կարող է լրացվել հարակից մագիստրոսական ծրագրերի պարտադիր և կամընտրական դասընթացների ցանկից՝ համապատասխան հիմնավորումով: Կամընտրական դասընթացներն ընտրվում են 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում՝ մինչև ապրիլի 1-ը: Դասընթացը կայանում է, եթե ընդգրկված են նվազագույն թվով ուսանողներ (ուսանողների նվազագույն թիվը սահմանվում է ըստ գործող նորմերի):

## **2.2. Հետազոտական կառուցամաս**

Ծրագրի հետազոտական կառուցամասի աշխատածավալը 45 կրեդիտ է և ներառում է հետևյալ բաղադրիչները՝ *գիտական սեմինար* (12 կրեդիտ), *մասնագիտական պրակտիկա* (6 կրեդիտ) և *մագիստրոսական թեզ* (27 կրեդիտ):

**2.2.1. Գիտական սեմինարը** ֆակուլտետի փորձառու և հետազոտական աշխատանքներում անմիջականորեն ներգրավված պրոֆեսորների կամ դոցենտների կողմից (կազմը՝ 1-3, մագիստրոսական ծրագրի ղեկավարի պարտադիր մասնակցությամբ) տվյալ կրթական ծրագրի բոլոր մագիստրանտների համար (1-ին և 2-րդ կուրսերը համատեղ, առավելա-

գույնը՝ 30 ուսանող) իրականացվող սեմինարների շարք է՝ շաբաթական 2 լսարանային ժամ բեռնվածությամբ և դասատախտակով սահմանված գրաֆիկով: Գիտական սեմինարը կազմակերպվում է ուսումնառության 1-4-րդ կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում սեմինարավար(ներ)ի կողմից սահմանված թվով ելույթների/զեկուցումների ու քննարկումներին ակտիվ մասնակցության համար ուսանողին հատկացվում է 3 կրեդիտ: Աշնանային (1-ին և 3-րդ կիսամյակներ) կիսամյակում սեմինարավար(ներ)ը 1-ին կուրսի ուսանողներին ծանոթացնում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրներին, ֆակուլտետում իրականացվող հետազոտական աշխատանքներին և դրանց արդյունքներին, իրազեկում են մագիստրոսական թեզերի դեկավարների կողմից առաջարկվող հնարավոր թեմաների մասին և խորհրդատվություն տրամադրում դրանց ընտրության հարցում: 1-ին կուրսի ուսանողները մասնակցում են զեկուցումների շուրջ ծավալվող քննարկումներին: 2-րդ կուրսի ուսանողներն այդ կիսամյակում հանդես են գալիս մագիստրոսական ատենախոսության շրջանակներում կատարվող հետազոտության վերաբերյալ կարճ զեկուցումներով, մասնավորապես ներկայացնում են իրենց հետազոտության ծրագիրն ու նախնական արդյունքները: Գարնանային կիսամյակում (2-րդ և 4-րդ կիսամյակներ) 1-ին կուրսի մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական աջակցություն, ձևա-

վորվում և զարգացվում են գիտական հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, հարցադրումներ անելու նրանց ունակություններն ու հմտությունները: Նրանք կարճ հաղորդումներ են ներկայացնում մագիստրոսական ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվող հիմնախնդրի շուրջ կատարած իրենց տեսական վերլուծության և եզրահանգումների վերաբերյալ: 2-րդ կուրսի ուսանողները շարունակում են ներկայացնել իրենց մագիստրոսական թեզի հիմնադրույթները, արդյունքները և կատարման ընթացքը/առաջընթացը: Նրանց համար կազմակերպվում է մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանություն:

**2.2.2. Մասնագիտական պրակտիկան** կազմակերպվում է 3-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 4-րդ) կիսամյակի ընթացքում՝ մասնագիտացնող ամբիոն(ներ)ի կողմից կազմված և հաստատված ծրագրով: Այն կազմակերպվում է մասնագիտական ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում և հաստատություններում՝ 180 ժամ ընդհանուր աշխատածավալով (6 կրեդիտ): Ուսանողները պրակտիկայի կատարման վերաբերյալ մասնագիտացնող ամբիոն(ներ) են ներկայացնում սահմանված ձևաչափի և բովանդակության հաշվետվություն, իսկ մասնագիտությամբ առնվազն 6 ամիս աշխատող (առկա ուսուցման դեպքում՝ դասերից դուրս) ուսանողները պրակտիկայի ատեստավորման նպատակով ներկայացնում են սահմանված ձևաչափի տեղեկանք՝

իրենց աշխատանքային գործունեության բնույթի և իրականացվող աշխատանքների ցանկի ու նկարագրության վերաբերյալ:

**2.2.3. Մագիստրոսական թեզը** մագիստրոսի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 2-4-րդ կիսամյակներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 3-5-րդ կիսամյակներում: Բոլոր ուսանողները մինչև 1-ին (հեռակա ուսուցման դեպքում՝ 2-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան թեզի հրամանագրված թեմաներ և դեկավարներ: Մագիստրոսական թեզի ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ համաձայն ԵՊՀ ընդհանուր պահանջների: Թեզի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 27 կրեդիտ աշխատաձևով:

### **2.3. Ծրագրի ավարտական պահանջները**

**2.3.1.** Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը մագիստրոսի ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն:

**2.3.2.** Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն 18 կրեդիտ *ընդհանուր դասընթացների*, 15 կրեդիտ՝ *մասնագիտական դասընթացների կրթամասերից* և 45 կրեդիտ՝ *հետազոտական կառուցամասից*: Մնացած 42 կրեդիտների բո-

վանդակային կազմը սահմանվում է *մասնագիտացման պարտադիր* և *կամընտրական դասընթացներով*<sup>15</sup>՝ ելնելով տվյալ մասնագիտացման կրթական վերջնարդյունքներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմից:

### **3. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Մագիստրոսի ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրվում են այնպես, որ բավարարեն ոլորտը կարգավորող հետևյալ պաշտոնական փաստաթղթերի պահանջները.

1. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի* մակարդակների նկարագրիչներով մագիստրոսի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով<sup>15</sup>:
2. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակի* (առկայության դեպքում) որակավորումների նկարագրիչներով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով:

---

<sup>15</sup> ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշումը ՀՀ որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին:

3. ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկի<sup>16</sup> և կրթական ծրագրի մասնագրի<sup>17</sup> կազմման պահանջները:
4. Տվյալ մասնագիտական ոլորտում կիրառվող միջազգային ծրագրային կողմնորոշիչները և տարբեր հենանիշները (բենչմարքները), տեղական և գլոբալ մասնագիտական աշխատաշուկայի պահանջները և այլն:

---

<sup>16</sup> ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ, 2012 թ.:

<sup>17</sup> ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրի լրացման ուղեցույց, 2014 թ.:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ**

*(Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ.  
մարտի 2-ի թիվ 5 նիստում)*

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ  
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Մագիստրոսական թեզը ինքնուրույն հետազոտական, վերլուծական և/կամ կիրառական նշանակության ավարտուն աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտական ոլորտում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, ինչպես նաև գիտական խնդիրներ բարձրացնելու և նոր լուծումներ առաջադրելու հմտությունները:
- 1.2. Մագիստրոսական թեզի կատարումը և հրապարակային պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի ավարտական պահանջներից են:
- 1.3. Մագիստրոսական թեզը մագիստրոսի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 2-4-րդ կիսամյակներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 3-5-րդ կիսամյակներում: Բոլոր ուսանողները մինչև 1-ին (հեռակա ուսուցման դեպքում՝

2-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան թեզի հրամանագրված թեմաներ և ղեկավարներ: Թեզի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 27 կրեդիտ աշխատաժամավա:

**2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

**2.1.** Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը և ներկայացվող պահանջները**

<b>Կառուցվածքը</b>	<b>Ներկայացվող պահանջները</b>
<i>Տիտղոսաթերթ</i>	Տիտղոսաթերթը լրացվում է համաձայն Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի
<i>Ստորագրությունների էջ</i>	Մագիստրոսական թեզի տիտղոսաթերթին հաջորդող էջում ստորագրում են ուսանողը, գիտական ղեկավարը և ամբիոնի վարիչը (տե՛ս Հավելված 2)
<i>Համառոտագիր</i>	Տրվում են թեզի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումները, իսկ նպատակը և ստացված արդյունքները ներկայացվում են միայն հայերեն (0,5-1 էջ)
<i>Բովանդակություն</i>	Ըստ հերթականության ներկայացվում են թեզի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները, որոնք կցվում են թեզին
<i>Ներածություն</i>	Ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, գիտական և/կամ կիրառական նշանակությունը

<i>Հիմնական մաս</i>	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների և կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը և վերլուծությունը, մեկնաբանություններ և ամփոփում
<i>Եզրակացություններ (և առաջարկություններ)</i>	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի նշանակալի արդյունքները: Կարող են ներկայացվել նաև առաջարկություններ
<i>Օգտագործված գրականության ցանկ</i>	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է թեզը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված
<i>Հավելվածներ</i>	Առկայության դեպքում կցվում են թեզին

### 3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

**3.1.** Մագիստրոսական թեզը պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր (կազմված) և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխ-

ների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Թեզի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 4-րդ էջ:

- 3.2. Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:
- 3.3. Աշխատանքի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկն ըստ այբբենական կարգի՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն հաջորդականությամբ: Ցանկում գրականությունը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանո-

թանալու ամսաթիվը (օրինակ, ... // URL: <http://www.info...>, 14.06.2016):

- 3.4.** Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]), կամ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը (Պողոսյան, 2015; Պետրոսյան և այլք, 2010), կամ տողատակում, ինչպես ներկայացվում է օրինակում<sup>18</sup>:
- 3.5.** Մագիստրոսական թեզի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում են ֆակուլտետների (կենտրոնների, ինստիտուտների) գիտական խորհուրդները՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից:

#### **4. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

- 4.1.** Մագիստրոսական թեզի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են ԵՊՀ առկա ուսուցման համակարգի համար սահմանված ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն (տե՛ս Աղյուսակ 2): Հեռակա ուսուցման համակարգում յուրաքանչյուր գործողություն իրականացվում է Աղյուսակ 2-ում ներկայացված վերջնաժամկետից մեկ կիսամյակ ուշ:
- 4.2.** Մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքները կատարվում են գիտական ղեկավարի խորհրդատվու-

---

<sup>18</sup> Ավանյան Լ., Ալավերդյան Ռ. Լույսի բևեռացումը և նրա հետազոտումը: Ուս. ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014 թ., էջ 53:

թյամբ և վերահսկողությամբ: Գիտական ղեկավարի պարտականություններն են .

ա) մագիստրոսական թեզի առաջադրանքի կազմում,  
բ) թեզի կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում և դրա իրականացման վերահսկողություն,

գ) թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրության և օգտագործման համար առաջարկություններ կամ խորհրդատվություն,

դ) օգնություն ուսանողին՝ հետազոտության պլանի մշակման հարցում,

ե) խորհրդատվություն ուսանողին՝ մագիստրոսական թեզի կատարման բոլոր հարցերում՝ համաձայն խորհրդատվությունների համար ուսումնական ստորաբաժանման կողմից սահմանված կիսամյակային գրաֆիկի,

զ) ծանուցում ուսանողին՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,

է) խորհրդատվություն (օգնություն) ուսանողին՝ ելույթի պատրաստման և պաշտպանության համար անհրաժեշտ ցուցադրական նյութերի ընտրության հարցում,

ը) թեզի վերաբերյալ գիտական ղեկավարի գրավոր կարծիքի կազմում:

**4.3. Գիտական ղեկավարի կարծիքում արտացոլվում են .**

ա) աշխատանքի արդիականությունը և կարևորությունը,  
բ) ուսանողի՝ ինքնուրույն հետազոտություն կատարելու, տվյալներ մշակելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունը,

- գ) աշխատանքում գիտական, մեթոդական և/կամ գործնական նորույթ պարունակող տարրերի առկայությունը,
- դ) գործնական առաջարկությունների/երաշխավորությունների առկայությունը,
- ե) կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները,
- զ) թեզի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,
- է) երաշխավորություն թեզի հրապարակային պաշտպանության համար:

**4.4.** Մագիստրոսական թեզի նախապաշտպանությունն իրականացվում է մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանումում (միջամբիոնային հանձնախմբում)՝ ստորաբաժանման և մագիստրոսական ծրագրի ղեկավարների, ինչպես նաև ուսանողի գիտական ղեկավարի մասնակցությամբ:

**4.5.** Թեզի նախապաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում (աշխատանքում այլ աղբյուրներից առանց հղման, զգալի չափով օգտագործված ցանկացած նյութ (տեքստ) համարվում է գրագողություն) աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության:

**4.6.** Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

4.7. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգի<sup>19</sup>:

**Աղյուսակ 2. Մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության ժամանակացույց**

Գործողություն	Վերջնաժամկետ
Մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն և հաստատում, գիտական ղեկավարի նշանակում և հրամանագրում	1-ին կիսամյակի ավարտ
Թեզի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում, հետազոտության պլանի մշակում, հետազոտության մեթոդների ընտրություն, գրականության վերլուծություն/մշակում և ներկայացում ուսումնական ստորաբաժանում ատեստավորման համար	2-րդ կիսամյակի ավարտ
Թեզի հետազոտական մասի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի քննարկում և հաղորդում գիտական սեմինարների ընթացքում, որոնց հիման վրա իրականացվում է ատեստավորում	3-րդ կիսամյակի ավարտ
Հետազոտության արդյունքների ամփոփում, թեզի հանձնում ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանում	4-րդ կիսամյակ, պաշտպանությունն ինչ առնվազն 4 շաբաթ առաջ
Գիտական ղեկավարի կարծիքի ներկայա-	4-րդ կիսամյակ,

<sup>19</sup> «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»՝ հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2017 թ. նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրամանով

<p>ցում, թեզի նախապաշտպանություն, որոնց հիման վրա իրականացվում է ատեստավորում: Էական դիտողությունների առկայության դեպքում՝ աշխատանքի լրամշակում և ներկայացում ուսումնական ստորաբաժանում մեկ շաբաթվա ընթացքում</p>	<p>պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ</p>
<p>Մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում<sup>20</sup> (տե՛ս Հավելված 3)</p>	<p>4-րդ կիսամյակ, գրախոսականի ներկայացում ուսումնական ստորաբաժանում պաշտպանությունից առնվազն 3 օր առաջ</p>
<p>Թեզի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում</p>	<p>4-րդ կիսամյակի ավարտ<sup>21</sup></p>

**5. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

- 5.1.** Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորոշիչների (տե՛ս Աղյուսակ 3):
- 5.2.** Ուսանողի արդյունարար միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած արդյունարար միավորների միջինն է:

---

<sup>20</sup> ԵՊՀ հիմնական աշխատողը չի կարող լինել արտաքին գրախոս:  
<sup>21</sup> Թեզի հրապարակային պաշտպանության ժամկետները սահմանվում են ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով:

- 5.3.** Ուսանողի մագիստրոսական թեզը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:
- 5.4.** Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողների ներկայությամբ:  
(5.2, 5.3, 5.4 ենթակետերը լրացվել են ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2018 թ. փետրվարի 14-ի նիստի թիվ 4/3 որոշմամբ):

## **6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ**

- 6.1.** Գնահատման արդյունքների հրապարակումից հետո հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:
- 6.2.** Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում, դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:
- 6.3.** Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» վերոնշյալ կարգի (այսուհետև՝ Կարգ) ընթացակարգային դրույթների խախտումներ:
- 6.4.** Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց անմիջապես հետո շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն սույն կարգի 5.1 կետում սահմանված չափանիշների և չափորոշիչների:

**6.5.** Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրարկման և գնահատման միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում հանձնաժողովը.

ա) փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,

բ) չի փոխում գնահատականը, եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,

գ) չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առկա են Կարգի ընթացակարգային լուրջ խախտումներ, և անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն:

**(6-րդ կետը լրացվել է ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2018 թ. փետրվարի 14-ի նիստի թիվ 4/3 որոշմամբ):**

**Աղյուսակ 3.** Մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները

*Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն* \_\_\_\_\_

*Թեզի թեման* \_\_\_\_\_

*Հանձնաժողովի անդամ՝ գիտ.աստ., կոչում, ազգանուն, անուն* \_\_\_\_\_

Գնահատման չափանիշ/ առավելագույն միավոր	Չափորոշիչ	Հատկացվող միավոր	Ընդհանուր միավոր
<p><b>1.</b> Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը</p> <p><i>Առավելագույն միավորը՝ 2</i></p>	<p>1.1. Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Կատարված են թեմային արնչվող անհրաժեշտ գրականության վերլուծություն և ամփոփում</p>	<p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p> <p><input type="checkbox"/> - 0</p>	

<p><b>2. Հետազոտության իրականացումը և արդյունքները</b></p> <p><i>Առավելագույն միավորը՝ 6</i></p>	<p>2.1. Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ որված խնդիրներին համապատասխան</p> <p>2.2. Ստացված արդյունքները հիմնավորված են և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ</p> <p>2.3. Կատարված է արդյունքների ամբողջական վերլուծություն, և արված են համապատասխան եզրակացություններ (նաև առաջարկություններ)</p>	<p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p> <p><input type="checkbox"/> - 0</p> <p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p> <p><input type="checkbox"/> - 0</p> <p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p> <p><input type="checkbox"/> - 0</p>	
<p><b>3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը</b></p> <p><i>Առավելագույն միավորը՝ 4</i></p>	<p>3.1. Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը</p> <p>3.2. Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների</p>	<p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p> <p><input type="checkbox"/> - 0</p> <p><input type="checkbox"/> - 2</p> <p><input type="checkbox"/> - 1</p>	

	<p>Աշխատանքում արվա են հետազոտությունը և արդյունքները հիմնավորող հիմնական տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)</p>	<p><input type="checkbox"/> - 0</p>
<p><b>4. Աշխատանքի հրատարակալին պաշտպանությունը</b></p> <p><b>Առավելագույն միավորը՝ 8</b></p>	<p>4.1. Ձեկույցում հիմնավորվում են հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացվում են մեթոդաբանությունը, աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները</p>	<p><input type="checkbox"/> - 2  <input type="checkbox"/> - 1  <input type="checkbox"/> - 0</p>
	<p>4.2. Ձեկույցը հստակ է և հետևողական, զեկուցողը կարողանում է փոխկապակցված ձևով ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել արդյունքները</p>	<p><input type="checkbox"/> - 2  <input type="checkbox"/> - 1  <input type="checkbox"/> - 0</p>
	<p>4.3. Հարցերին և դիտողություններին զեկուցողը պատասխանում է հիմնավորված և սպառիչ</p>	<p><input type="checkbox"/> - 2  <input type="checkbox"/> - 1  <input type="checkbox"/> - 0</p>

	<p>4.4. Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը</p>	<input type="checkbox"/> - 2 <input type="checkbox"/> - 1 <input type="checkbox"/> - 0
<p><b>Արդյունադար առավելագույն միավորը՝ 20</b></p>		

**ՀԱՎԵԼՎԱԾ 1.**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ [18 pt, Bold]**

\_\_\_\_\_ **ՖԱԿՈՒԼՏԵՏ [18 pt, Bold]**

\_\_\_\_\_ **ուսումնական ստորաբաժանում [16 pt, Bold]**

\_\_\_\_\_ **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ [18 pt, Bold]**

**ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ [18 pt, Bold]**

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ [18 pt, Bold]**

**ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ [16 pt, Bold]**

« \_\_\_\_\_ » **մասնագիտությամբ**  
\_\_\_\_\_ **մագիստրոսի որակավորման**  
**աստիճանի հայցման համար [14 pt, Bold, Italic]**

**ԵՐԵՎԱՆ 2017 [13 pt, Bold]**

## ՀԱՎԵԼՎԱԾ 2.

**Ուսանող՝ \_\_\_\_\_** [13 pt, Bold, Italic]  
*ստորագրություն*

---

*ազգանուն, անուն*

**Գիտական ղեկավար՝ \_\_\_\_\_** [13 pt, Bold, Italic]  
*ստորագրություն*

---

*գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն*

**«Թույլատրել պաշտպանության»**

**Ամբիոնի վարիչ՝ \_\_\_\_\_** [13 pt, Bold, Italic]  
*ստորագրություն*

---

*գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն*

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ.

**ԿԱՐԾԻՔ**

**ԵՊՀ մագիստրատուրայի ուսանող(ուհի)**

\_\_\_\_\_ -ի

*(ազգանուն, անուն, հայրանուն)*

\_\_\_\_\_

*(թեմայի անվանումը)*

**մագիստրոսական թեզի վերաբերյալ<sup>22</sup>**

**1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**2. Հետազոտության իրականացումը և արդյունքները**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

<sup>22</sup> Գրախոսը նախապես պետք է ծանոթ լինի սույն կարգում սահմանված մագիստրոսական թեզի գնահատման չափանիշներին:

---

---

**Դիտողություններ**

---

---

---

---

**Եզրակացություն** (աշխատանքը բավարարում է/չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է/արժանի չէ տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի շնորհմանը)

---

---

**Գրախոս՝**

---

*(ազգանուն, անուն, հայրանուն)*

---

*(գիտական աստիճան և կոչում)*

---

*(աշխատանքի վայրը, պաշտոնը)*

---

Ստորագրություն \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_ թ.



## ԲԱԺԻՆ 4

### ՊՐԱԿՏԻԿԱ

- 4.1. Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ



## Կ Ա Ր Գ

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

*(Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2018 թ. մայիսի 3-ի  
նիստի թիվ 6/5 որոշմամբ)*

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Մույն կարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները:
2. Մույն կարգը հաստատվում է, և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարվում են ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

#### **II. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

3. Պրակտիկական ուսումնառության բաղկացուցիչ մասն է, որը հնարավորություն է ընձեռում ստացած գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, ձեռք բերել մասնագիտական հմտություններ և փորձառություն:
4. Պրակտիկական լինում է ուսումնական, մասնագիտական և մանկավարժական:
  - 4.1. Ուսումնական պրակտիկայի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքներն ու նպաստել մասնագիտական կարողությունների և

հմտությունների ձևավորմանը: Ուսումնական պրակտիկան, որպես կանոն, կազմակերպվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերում:

**4.2.** Մասնագիտական պրակտիկայի նպատակն է գործնական աշխատանքների միջոցով զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները և փորձառությունը, ինչպես նաև մասնագիտական ոլորտում ինքնուրույն աշխատելու կարողությունները: Մասնագիտական պրակտիկան, որպես կանոն, կազմակերպվում է բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում:

**4.3.** Մանկավարժական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողի՝ որպես ապագա մանկավարժի մասնագիտական կարողությունները և նպաստել մանկավարժական փորձառության ձեռքբերմանը: Մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է «ԵՊՀ բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգի» համաձայն:

**5.** Պրակտիկայի տեսակները, տևողությունը և անցկացման ժամկետները որոշվում են համապատասխան մասնագիտության կրթական ծրագրով:

**6.** Պրակտիկայի ծրագիրը ներկայացվում է տվյալ կրթական ծրագրի մասնագրում տրված նկարագրիչների միջոցով, որտեղ սահմանվում են պրակտիկայի նպատակը, նախատեսվող աշխատանքները, դրանց կատարման վայրը, տեսակը, ձևը, կրթական վերջնարդյունքները, գնահատման մեթոդները և չափանիշները:

7. Պրակտիկայի ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակացույցը ներկայացվում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմանը՝ ուսումնական աշխատանքային պլանների կազմման և հաստատման ժամանակացույցին համապատասխան:
8. Ուսանողների պրակտիկան կազմակերպվում է ուսումնական և գիտական հաստատություններում, ԵՊՀ ուսումնաարտադրական բազաներում, պետական կառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում, մասնավոր ընկերություններում, արտադրական ձեռնարկություններում, ինչպես նաև տվյալ մասնագիտության ոլորտային այլ կազմակերպություններում, որոնք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազա և մասնագետներ:

### III. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Ուսանողների պրակտիկան կազմակերպում է ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը՝ մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման (ֆակուլտետի, ինստիտուտի, կենտրոնի) հետ համատեղ:
10. Պրակտիկայի կազմակերպման և իրականացման պատասխանատվությունը կրում են ԵՊՀ պրակտիկայի ղեկավարը և համապատասխան ստորաբաժանման պրակտիկայի պատասխանատուն/համակարգողը:
11. ԵՊՀ պրակտիկայի ղեկավարը.
  - 11.1. պրակտիկայի կազմակերպման նպատակով ԵՊՀ-ի անունից բանակցում է համապատասխան կազմակերպությունների հետ,

- 11.2.** ըստ ժամանակացույցի՝ համակարգում է պրակտիկայի ծրագրերի կազմման աշխատանքները և հետևում դրանց անցկացման ժամկետների պահպանմանը,
- 11.3.** ԵՊՀ ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի հաստատմանն է ներկայացնում պրակտիկայի անցկացման հրամանների նախագծերը, պրակտիկայի ժամանակացույցը և երթուղիները,
- 11.4.** ստորաբաժանումների պրակտիկայի պատասխանատուներից ստացված հաշվետվությունների հիման վրա կատարում է պրակտիկայի ամփոփում,
- 11.5.** ԵՊՀ ստորաբաժանումներում անցկացնում է պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ ժողովներ:
- 12.** ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման պրակտիկայի պատասխանատուն նշանակվում է տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից (որպես կանոն՝ այդ աշխատանքներն իրականացնում են ֆակուլտետի ղեկանի կամ ինստիտուտի տնօրենի տեղակալները):
- 13.** Ստորաբաժանման պրակտիկայի պատասխանատուն պարտավոր է կազմել և ԵՊՀ պրակտիկայի ղեկավարին ներկայացնել.
- 13.1.** պրակտիկային ուսանողների մասնակցության վերաբերյալ հրամանների նախագծերը՝ ուսանողներին տեղաբաշխելով ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի,
- 13.2.** անցկացված պրակտիկայի վերաբերյալ հաշվետվությունները, այդ թվում՝ պրակտիկան չանցած և ստուգարքը չհանձնած ուսանողների անվանացանկը:

14. Պրակտիկայի անմիջական ղեկավարը տվյալ կրթական ծրագրով պրակտիկական անցկացնող անձն է (ըստ տվյալ ուսումնական տարվա համար հաստատված ուսումնական բեռնվածության, որի համար հիմք է հանդիսանում «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը»):
15. Պրակտիկայի անմիջական ղեկավարը.
- 15.1. սահմանված կարգով կազմում և ամբիոնի քննարկմանն է ներկայացնում պրակտիկայի ծրագրի նախագիծը,
- 15.2. սույն կարգի 6-րդ կետի համաձայն՝ պրակտիկայի ծրագրի հաստատումից հետո ապահովում է դրանից բխող միջոցառումների կատարումը,
- 15.3. սահմանված կարգով և պրակտիկայի ծրագրին համապատասխան՝ վարում է ուսանողների պրակտիկական և ապահովում գնահատման գործընթացը,
- 15.4. իրականացնում է պրակտիկայի բովանդակությունից բխող այլ գործառույթներ:

#### IV. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

16. Պրակտիկական գնահատվում է ստուգարքի ձևով: Պրակտիկական գնահատվում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային, կատարել ծրագրով նախատեսված առաջադրանքները, սահմանված ժամկետում ներկայացրել պրակտիկայի վերաբերյալ ավարտուն հաշվետվություն և/կամ պրակտիկայի օրագիրը (կարծիք-բնութագիր):

17. Մասնագիտությամբ աշխատող ուսանողը կարող է մասնագիտական պրակտիկան անցնել իր աշխատավայրում՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
18. Ուսումնական պրակտիկան չանցած ուսանողը կարող է վճարովի հիմունքներով անցնել տվյալ կրթական ծրագրով նախատեսված ուսումնական պրակտիկաներից միայն մեկը և հանձնել ստուգարքը մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ ակադեմիական պարտքերի մարման կարգին համապատասխան:
19. Պրակտիկային վճարովի հիմունքներով մասնակցած, սակայն ստուգարքը չհանձնած ուսանողը հեռացվում է ԵՊՀ-ից:
20. Մասնագիտական պրակտիկան չանցած ուսանողը հեռացվում է ԵՊՀ-ից՝ իր ուսանողական իրավունքները վերականգնելու և պրակտիկան կրկին անցնելու հնարավորությամբ:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### I. Բակալավրի կրթական ծրագիր



















## II. Մագիստրոսի կրթական ծրագիր



**ՀԱՎԵԼՎԱԾ-1. Առկա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ**

Քվանիչ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրկնա-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ				Կիսամյակներ								Գնահատման ձևը	
			Ընթ.	Դպի.	Գրք./սեմ.	Լաբ.	Բնթ.	1		2		3		4		
								Կրթ.	Լա.ծ	Կրթ.	Լա.ծ	Կրթ.	Լա.ծ	Կրթ.		Լա.ծ
<b>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		<b>75</b>	<b>2250</b>	<b>435</b>	<b>315</b>	<b>0</b>	<b>1500</b>	<b>27</b>	<b>18</b>	<b>27</b>	<b>18</b>	<b>21</b>	<b>14</b>	<b>0</b>	<b>0</b>	
	<b>Ընդհանուր դասընթացներ</b>	<b>15</b>	<b>450</b>	<b>15</b>	<b>135</b>	<b>0</b>	<b>300</b>	<b>12</b>	<b>8</b>	<b>3</b>	<b>2</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	
	Օտար լեզու-1	6	180		60		120	6	4							Ստ.
	Օտար լեզու-2	3	90		30		60			3	2					Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	90		30		60	3	2							Ստ.
	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3	90	15	15		60	3	2							Ստ.
	<b>Մասնագիտական դասընթացներ</b>	<b>15</b>	<b>450</b>	<b>90</b>	<b>60</b>	<b>0</b>	<b>300</b>	<b>15</b>	<b>10</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	
	Մասնագիտության արդի էինսանդիլները	3	90	30			60	3	2							Ստ.
	Դասընթաց-1	6	180	30	30		120	6	4							Քն.
	Դասընթաց-2	6	180	30	30		120	6	4							Քն.
	<b>Մասնագիտացման դասընթացներ</b>	<b>45</b>	<b>1350</b>	<b>330</b>	<b>120</b>	<b>0</b>	<b>900</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>21</b>	<b>14</b>	<b>0</b>	<b>0</b>	
	<b>Պարտադիր</b>	<b>24</b>	<b>720</b>	<b>180</b>	<b>60</b>	<b>0</b>	<b>480</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	
	Դասընթաց-1	3	90	30			60			3	2					Քն.
	Դասընթաց-2	3	90	30			60			3	2					Քն.
	Դասընթաց-3	3	90	30			60			3	2					Քն.
	Դասընթաց-4	3	90	30			60			3	2					Քն.
	Դասընթաց-5	6	180	30	30		120			6	4					Քն.
	Դասընթաց-6	6	180	30	30		120			6	4					Քն.
	<b>Կամբնտրական</b>	<b>21</b>	<b>630</b>	<b>150</b>	<b>60</b>	<b>0</b>	<b>420</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>21</b>	<b>14</b>	<b>0</b>	<b>0</b>	
	Դասընթաց-1	3	90	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-2	3	90	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-3	3	90	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-4	3	90	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-5	3	90	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-6	3	90	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-7	6	180	30	30		120					6	4			Քն.
	Դասընթաց-8	6	180	30	30		120					6	4			Քն.
	Դասընթաց-9	6	180	30	30		120					6	4			Քն.
	<b>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	<b>45</b>	<b>1350</b>	<b>0</b>	<b>120</b>	<b>0</b>	<b>1230</b>	<b>3</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>2</b>	<b>9</b>	<b>2</b>	<b>30</b>	<b>2</b>	
	Գիտական սեմինար	12	360		120		240	3	2	3	2	3	2	3	2	4 Ստ.
	Մասնագիտական պրակտիկա	6	180				180					6	-			Ստ.
	Մագիստրոսական թեզ	27	810				810							27	-	Պաշտ.
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>120</b>	<b>3600</b>	<b>435</b>	<b>435</b>	<b>0</b>	<b>2730</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>30</b>	<b>16</b>	<b>30</b>	<b>2</b>	
<b>Ուսումնական/գիտական մոդուլների քանակը</b>								<b>7</b>	<b>8</b>	<b>7</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>24</b>			

**ՀԱՎԵԼՎԱԾ-2.** Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ

Քվանիշ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրկիմար-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ					Գնահատման ձևը
			Ընդ.	Դրսի.	Գրիծ/անվ.	Լաբ.	Ինք.	1	2	3	4	5	
								Կրկ.	Կրկ.	Կրկ.	Կրկ.	Կրկ.	
<b>ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		<b>75</b>	<b>2250</b>	<b>145</b>	<b>105</b>	<b>0</b>	<b>2000</b>	<b>21</b>	<b>21</b>	<b>21</b>	<b>12</b>	<b>0</b>	
	<b>Ընդհանուր դասընթացներ</b>	<b>15</b>	<b>450</b>	<b>5</b>	<b>45</b>	<b>0</b>	<b>400</b>	<b>12</b>	<b>3</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	
	Օտար լեզու-1	6	180		20		160	6					Ստ.
	Օտար լեզու-2	3	90		10		80		3				Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	90		10		80	3					Ստ.
	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3	90	5	5		80	3					Ստ.
	<b>Մասնագիտական դասընթացներ</b>	<b>15</b>	<b>450</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>0</b>	<b>400</b>	<b>9</b>	<b>6</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	
	Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3	90	10			80	3					Ստ.
	Դասընթաց-1	6	180	10	10		160	6					Քն.
	Դասընթաց-2	6	180	10	10		160		6				Քն.
	<b>Մասնագիտացման դասընթացներ</b>	<b>45</b>	<b>1350</b>	<b>110</b>	<b>40</b>	<b>0</b>	<b>1200</b>	<b>0</b>	<b>12</b>	<b>21</b>	<b>12</b>	<b>0</b>	
	<b>Պարտադիր</b>	<b>24</b>	<b>720</b>	<b>60</b>	<b>20</b>	<b>0</b>	<b>640</b>	<b>0</b>	<b>12</b>	<b>12</b>	<b>0</b>	<b>0</b>	
	Դասընթաց-1	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-2	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-3	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-4	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-5	6	180	10	10		160			6			Քն.
	Դասընթաց-6	6	180	10	10		160			6			Քն.
	<b>Կամրերական</b>	<b>21</b>	<b>630</b>	<b>50</b>	<b>20</b>	<b>0</b>	<b>560</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>9</b>	<b>12</b>	<b>0</b>	
	Դասընթաց-1	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-2	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-3	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-4	3	90	10			80		3				Քն.
	Դասընթաց-5	3	90	10			80			3			Քն.
	Դասընթաց-6	3	90	10			80			3			Քն.
	Դասընթաց-7	6	180	10	10		160				6		Քն.
	Դասընթաց-8	6	180	10	10		160				6		Քն.
	Դասընթաց-9	6	180	10	10		160				6		Քն.
	<b>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	<b>45</b>	<b>1350</b>	<b>0</b>	<b>40</b>	<b>0</b>	<b>1310</b>	<b>3</b>	<b>3</b>	<b>3</b>	<b>9</b>	<b>27</b>	
	Գիտական սեմինար	12	360		40		320	3	3	3	3		4 Ստ.
	Մասնագիտական պրակտիկա	6	180				180				6		Ստ.
	Մագիստրոսական թեզ	27	810				810					27	Պաշտ.
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>120</b>	<b>3600</b>	<b>145</b>	<b>145</b>	<b>0</b>	<b>3310</b>	<b>24</b>	<b>24</b>	<b>24</b>	<b>21</b>	<b>27</b>	
<b>Ուսումնական/գիտական մոդուլների քանակը</b>								<b>6</b>	<b>7</b>	<b>6</b>	<b>4</b>	<b>1</b>	<b>24</b>



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Հրատ. խմբագրումը՝ Ա. Բրուտյանի  
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Ստորագրված է տպագրության՝ 13.07.2018:  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 8.5:  
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)